# Ս Ո Փ Ե Ր Ք
# Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ք
## Զ.

# ՆԵՐՍԷՍ ՊԱՐԹԵՒ

## Ա.

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ

# ՊԱՐԹԵՒԻ

# ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի Տպարանի Մխիթարեանց

1853

Անուն կնոջ Աթանագինէի Բամբիշն. Ի սորանէ ծնաւ այր պանծալի և զարմանալի, Ներսէս, որ առ յաղագս նոցա քահանայապետ. — Բուզանդ Գ. ԺԵ.

Եպիսկոպոսութեան Հայոց Ներսէսի շինէր զամենայն աւերեալսն երկրին Հայոց. յանձն առնէր և մխիթարէր, զարմանէր և առատ շինէր ամենայն աղքատաց. և զգիշերս և զցերեկս հանդուցանէր. Եւ շինէր զեկեղեցիս ընդ ամենայն տեղիս.. և զամենայն կարգսն առաքելական՝ ուղղէր և նորոգէր. Շինէր և հաստատէր, խրատէր և յանդիմանէր. բազում առնէր նշանս և զօրութիւնս մեծամեծս և բազում բժշկութիւնս. — Նոյն Ե. ԻԱ.

Այսպէս յետ սպանանելոյն Պապայ զսուրբ հայրապետն Ներսէս, տիրեցաւ ամենայն մարդ խոր ապերութեամբ ... և ասէին. Բարձաւ են այդ փառք Հայոց. զի բարձաւ այրդ այն Աստուծոյ յայսմ երկրէ ... Եւ ազգին ամենայն աղաղակ և շփոթանք ծայրէ ՚ի ծայր ամենայն աշխարհաց երկրին Հայոց. ամենայն բնակիչք առանն Թորգոմայ, Հայ լեզուի առ հասարակ. — Նոյն. Լ.

# ՅԻՇԱՏԱԿ
# ՄԱՂԱՔԵԱՆ
# ԱԶԳԱՏՈՀՄԻՆ

# Ա Ձ Դ

Ներսէս՝ Մեծ արդարադատ ձայնեալ և երկրորդ Լուսաւորիչ Հայոց, արդիւնաշատն և օրինակ հայրապետաց, զարմանալին քաղաքավարութեամբ և քաղաքագիտութեամբ երկնաւոր և երկրաւոր կարգաց, և կենդանի խնամք Հայաստանեայց, համանդամայն օժանդակելով և զեկեղեցի և զթագաւորութիւն, զյաղթութիւն պատերազմաց և զհամբերութիւն տառապելոյ և անանկ մարդկութեան. որ վեհափայլ կենօք եկեաց և վեհակերպս իմն փոխեցաւ 'ի կենաց, անտանողական աչօքն և քահանայա-

պետական փառօք ընթագրելով զարհուրս մահու, և զծածուկս խորոց ամանակաց հոլովելով 'ի լոյս. բարեբաղդ գտանի թերեւս 'ի հարս մեր, կամ թէ մեք իսկ բարեբաղդագոյնք. զայսպիսի ունելով զնորա կենացն վայելչահիւս պատմութիւն. որ թէպէտ խուն առ նորին մեծութեամբ, զի զի՞նչ իսկ այնպիսում գեր եղելոյ 'ի մարդիկ՝ գոյէ հնար պատշաճեցուցանել. այլ առ մեզ մի ճանաչի 'ի գեղեցիկ չափով և համով ոտիերաց դպրութեան հայ լեզուիս, մանաւանդ բառ միպատանութեան առանձինն կենցաղականացն: Որոյ և հեգինակ գրոցն թուի ժամանակակից կամ ոչ շատ կրսեր 'ի նմանէն, որպէս յիշեցի և 'ի ծանօթութիւնն ըզկնի՝ 'ի թիւ 129. գործ՝ առ ասկեակ գարու Թարգմանչաց, և ոչ Մեսրոպայ երիցու 'ի ժամ կացելոյ՝

հեռաւորի և կրկին յերիւրողի պատմութեան բազում յաւելուածովք , 'ի Մնացորդաց Հայոց պատմութեանց քաղելով , որպէս և առէն : Բայց ո րք և զաս գրեաց՝ ընկալցի շնորհս առ 'ի մէնջ և յընթերցանելեացն . իցէ՞ թէ և ձեռին Ճարտարի հանեալ էր 'ի նկար զհրաշագիծ գրուագս գիպաց որ 'ի սմայն պատմին . մանաւանդ զողբերգական դէպս սպանման Գնելոյ յամենորաբեր հանդիսին Նաւասարդայ Հայոց , աշխարհախումբ բանակացն և եկեղեցական դասուց , զգիմակ գիմակ կրիցն՝ զպատանեկին հերոյ և զնորահարսին փառանձեմայ , զգաւաձանացն և զտարփածուաց . և զմեծի քահանայապետին՝ Ճշգրիտ կենդանագրելով :

---

Օրինակք վեց կամ եօթն կային առ մեզ պատմութեանս . յորոց ընագիր ընտրեցաք զերկաթագիր Տօնականի գրեալ յ՛ ՃԲ տարւոյ , զոր և բուն Օր . կոչեմք 'ի ծանօթութիւնս . և Բ օր . զքանչելն գրուած բոլորգիր ՃԳ տարւոյ . զանց արարեալ զայլովքն . բայց միայն և զերկու երկաթագիր հատուածս նոյն պատմութեան՝ Գ. և Դ. օր . կոչեմք . ակն արկանելով և 'ի նոսա : Մխային զայլաձայնութիս անուանց գաւառաց իշխանացն Հայոց՝ հաւաքեցաք յամենայն օրինակաց , այլ և 'ի վեցից օրինակաց պատմութեան Մեսրովպայ Երիցու , զոր առ ձեռն ունիմք , և նշանակեցաք 'ի ծանօթութիւնսն :

### ՅԱՂԱԳՍ ՉԱՐՄԻՑ

# ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ

# ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

### ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ

## ՀԱՅՐԱՊԵՏԻ

Ա. ՅԱՄԻ ութուտասներորդի մեծին Տրդատայ նստաւ յաթոռ սրբոյն Թադէոսի առաքելոյ՝ Լուսաւորիչն Հայոց Գրիգոր. և նա դարձոյց զամենայն Հայս 'ի գիտութիւն ճշմարտութեանն Քրիստոսի: Եւ յետ ամաց փոխի 'ի կարգս հրեշտակաց. և գտեալ զնա վախճանեալ յայն լերինն հովուացն, և ոչ ծանեան. և թաղեցին զնա իւր հանդերձիւն, քարակոյտ ա-

բարեաւ 'ի վերայ նորա ։ Իսկ 'ի կենդանութեանն իւրում ձեռնադրեաց իւր փոխանակ զկրսեր որդին իւր զԱրիստակէս ։

Արդ 'ի սպառել Թագաւորութեանն Արշակունեաց , բաժանեալ[1] զերկիրս Հայոց Պարսից և Յունաց ։ Յայնժամ ժամանակի Թագաւորն Յունաց տայրէ զօրավար 'ի Միջագետս զՊերինիանոս ։ Եւ յաւուրն յայնմիկ յայտնեցան նշխարք սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի . և այդ եղեւ կայսերն Յունաց Զենոնայ , և նա տայրէ բազում լեգէոն զօրս 'ի ձեռն զօրավարին Միջագետաց , որ եկեալ բռնութեամբ յափշտակեաց զնշխարս սրբոյն Գրիգորի . և ետ զաջ ձեռնն Հայոց վասն լուսաւորելոյն յառաջագոյն զնոսա , և այլ ինչ եւս մասն . և տարաւ զնա բանակդակ , և այլ մասն ինչ 'ի սրբոց Հռիփսիմեանց 'ի Կոստանդինուպոլիս , և 'ի մի տապանի եդին ։

Եւ աւուրն Ռոստակէս եկաց եպիսկոպոս Հայոց մեծաց ամս

եւթն ։ Եւ սպան զնա Արքեղաւոս ազգաւ Հայ 'ի Ծոփաց գաւառէն. և բերին զմարմին Ռոստակիսի յԵկեղեաց գաւառ 'ի Թիլն աւան, և անդ թաղեցին զնա ։ Եւ յաջորդեաց զաթոռ նորա երէց եղբայրն Վրթանէս ։

Յաւուրս նորա անկաւ 'ի մեծ պատերազմին սպարապետական Հայոց տէրն Մամիկոնէից Վաչէ · և սուրբն Վրթանէս զյիշատակ նորա 'ի փըրկան պատարագն 2 կարգեաց, և կատարեաց ժամն յիշման Վաչէի Մամիկոնեայց, և այլ զօրացն անկելոց 'ի մեծ պատերազմին · զոր կատարէին Հայք մինչեւ ցայսօր ։

Եւ յետ այսորիկ վախճանեցաւ Վրթանէս խաղաղական մահուամբ, և եդին զնա 'ի գեւղն Թորդան, որ եկաց քահանայապետ Հայոց մեծաց ամս հնգետասան ։ Յետ նորա յաջորդեաց զաթոռ նորա մանուկն Յուսիկն կըրսեր որդին Վրթանէսի ։ Իսկ Յուսկանն լեալ նորա երկու որդի, անուն միոյն Պապ եւ միւոյն Աթա-

նազինէս ։ Նա տեսեալ Յովսէփն զորդին իւր անուղղայ գնացիւք , ոչ արժանի լեալ աթոռոյ քահանայութեան , այլ 'ի սուգ անշնարին կայր և անմխիթար վասն նորա , և հոգալով կայր յաղօթս անհանգիստ առ Աստուած ։ Ապա 'ի միում գիշերի երեւեցաւ նմա հրեշտակ տեառն և ասէ ։ Մի՛ այլամեր Յովսէփ վասն որդւոյ քոյ , որ ոչ եղեն արժանի քահանայութեան ։ ահա ծնցի 'ի զաւակէ քո այլ զաւակ , որ նորոգեսցէ զվիճակ Թադէոսի առաքելոյ , և հաստատեսցէ զաթոռ մեծի քահանայապետին Գրիգորի Հայոց Լուսաւորչի ։ և անուանի անուն նորա Ներսէս ։ 'ի նմանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ ։ և խաղաղութիւն բազում և շինութիւն եկեղեցւոյ 'ի տեառնէ նմա շնորհեսցի ։ բազում մոլորեալք և արգելք նովաւ դարձցին առ տէր 3 . որով և Քրիստոս բազում լեզուք փառաւորեսցի նովաւ , որք սիւնք հաւատոյ լինիցին և մատակարարք

բանին կենաց. և բազում՝ տունկք պտղաբերք և շառաւեղք շայեկանք և օգտակարք հոգևոր դրախտին՝ 'ի նոյա մշակութենէն ժողովեցին յշտեմարանս Աստուծոյ. և բազում անգամ՝ կայցեն 'ի հովածանս վասն անուան անտառ պատուիրանին. և կայցեն անշարժ իրրև զմէմ՝ Եւ յետ նոյա անցանելոյն թագաւորեսցէ տուֆին յապարատան և յանձնանէր և յործաթանէր և 'ի տարան և յանդիտան և 'ի բանտարկու մարդկանէ. ապա թէ կարասցէ ոք զտան 'ի հաստատութեան ունել, հազիւ բառ ժամանակին չարութեան։

Զայս ամենայն լուեալ Յուսիկն 'ի հրեշտակէն՝ մխիթարէր յոյժ և գոհանայր զաստնէ՝ որ արժանի արար զնա այնպիսի յայտնութե։ Այս ամուսնացոյց Յուսիկ զորդի իւր. և անուն դուր Տիրանոյ թագաւորի յամուսնութիւն Աթանագինէ. և անուն կնոջն Բամբիշն։ Ի նմանէ ծնաւ բարեկչան որդի մի և անուանեցին զնա Ներ-

ակս բառ հրեշտակին տեսլեանն ։ Ցետ այսորիկ վախճանեցաւ Յուսիկն չարչարանօք 'ի Տիրանայ · և տարեալ եդին զնա 'ի շիրիմս հօր իւրոյ Վրթանիսի 'ի Թորդան · որ եկալ զաթոռ կաթողիկոսութեանն Հայոց մեծաց ամս վեց ։ Այլ ոչ գտան 'ի յազգէն որդոյն Գրիգորի կարգել քահանայապետ · Նստուցանեն զՓառներսեհ ոմն կաթողիկոս Հայոց մեծաց ամս չորս ։ Եւ յետ մահուան նորա զայս ամս ընդեաց հայրապետութիւն Հայոց Դ ։

Բ · Իսկ մանուկն Ներսէս մնաց և սնաւ 'ի Կեսարիացւոց գաւառին' ամուսնացաւ իւրով · և եղեւ որդի մի նորա և անուանեաց զնա Սահակ , 'ի կնոջէն' որում անուն էր Սանդուխտ 'ի յազգէն Մամիկոնենից ։ Եւ յետ երից ամաց մեռաւ ամուսինն իւր Սանդուխտ 'ի Կեսարիա · և հայր նորա Վարդան Մամիկոն տարեալ զմարմին նորա 'ի Թիլն աւան , և անդ պահեաց 5 զնա ։

Եւ յետ այսորիկ Թագաւորեաց

Արշակ փոխանակ հօր իւրոյ Տի-
րանայ. և եկեալ Ներսէս քննէր ան-
նեկական նորա ՚ի վերայ ամենայն
գանձուց նորա. վասն զի հօրա-
քեռ որդի էր Թագաւորին Արշա-
կայ: Իսկ աշխարհն Հայոց ՚ի մա-
հուանէն Յուսկանն մինչև ՚ի մեծն
Ներսէս, խոտորեալ էին ՚ի ճանա-
պարհացն Աստուծոյ ՚ի մեծամե-
ծաց մինչև ՚ի փոքունս. և գոր-
ծէին մեղս համարձակ իբրև զՍո-
դոմ. վասն այնորիկ եթող Աս-
տուած ՚ի ձեռանէ իւրմէ և մատ-
նեաց ՚ի ձեռս թշնամեաց իւրեանց.
և նեղէին զնոսա յամենայն կող-
մանց: Ապա միայնակեացք աշխար-
հին ՚ի մի վայր ժողովեալ և մար-
գարէական հոգւով իմացեալ, ե-
թէ ոչ լինի հնար փրկութեան
Հայոց աշխարհիս, եթէ ոչ գայցէ
առաջնորդ ՚ի յազգէ սրբոյն Գրի-
գորի: Այր մի ոմն ՚ի մեծ նախարա-
րացն ՚ի գաւառէն Շիրակայ, որ էր
միանձնացեալ ՚ի լերինս, յազգէն
Գնունեաց, որում անուն էր Պար-
գև, յառաջ մատուցեալ ասէ իր-

բեւ 'ի տեսչութենէ Աստուծոյ. Եւ տեսի 'ի տան Թագաւորին յազգէ որդոյն Գրիգորի մանուկ մի, որում անուն կոչի 'Ներսէս, կատարեալ հասակաւ և լի իմաստութեամբ և շնորհօք Աստուծոյ: Ապա լուեալ զայս ուրախ եղէն յոյժ, զի 'ի ձեռն նորա տալոց էր Աստուած փրկութիւն Հայոց աշխարհին, որ եղեւ իսկ:

Եւ տեսեալ Արշակայ որ ոչ գտանէր առաջնորդ 'ի մնացորդաց սուրբ ազգէն մեծի քահանայապետին Գրիգորի, և ոչ զօրավար 'ի քաջ և 'ի տիրասէր ազգէն Մամիկոնենից. և իմացեալ եթէ աւեր աշխարհին Հայոց այնր աղագաւ պատճառանաց եղեւ. ապա յարուցեալ ինքնին Թագաւորն զօրօքն իւրովք 'ի խնդիր եղանէ քաջ ազգին Մամիկոնենից, որ էին մնացիչք և մանկակալք և ընտանիք Թագաւորին. ապա երթեալ գտանէր զնոսա յամուրս աշխարհին իւրեանց Տայոց, ընդ նոսին և զԴնունիկն. և դարձուցանէր զնոսա ընդ

իւր․ վասն զի պատահեալ էին յինքնութենէ և 'ի զօրավորութենէ յամենայն գործոց Հայոց 'ի ժամանակին Տիրանայ Թագաւորին։ Եւ էին յազգէն Մամիկոնենից եղբարք չորք․ և անուն նոցա Վարդան և Վասակ, Վահան և Վրոյժ, որդիք Արտաւազդայ 6 որդւոյ Վաչէի Մամիկոնենւոյ․ և կացուցանէր զնոսա զօրավարս Հայոց Մեծաց, զոր առաջին Թագաւորքն նուաճեալ էին յիւրաքանչիւր յաւուրս։ Եւ տայր զգունդն Հայոց 'ի ձեռս Վասակայ կալ ընդդէմ պատերազմաց սպարապետութեամբ․ և զերիս եղբարս նորա ընդ նմա հազարապետս կացուցանէր։

Եւ կային զօրավարք Մամիկոնեանք ճակատամարտիկք, ռազմահարք, աղեղնաձիգք, արծուանշանք, նիզակախաղք, տապարախաղք, քաջասիրտք, աներկիւղք 'ի պատերազմունս, աջողակք 'ի մարտս պատերազմաց, բարեհամբաւք, բարենշանք, աղեղնաձիգք 'ի մարտս պատերազմաց իշխանք [illegible] ընդ և-



ԳՐԱԴԱՐԱՆ

զեղն ընթանային տիրանէր ազգն Մամիկոնենից, իբրեւ կարգեցան զօրավարք Մամիկոնք։

Գ. Յետ այսորիկ խորհուրդ տատանածային 'ի մէջ առեալ երկրիս Հայոց, և ինքն Թագաւորն Արշակ վասն ազգի սրբոյն Գրիգորի քահանայապետութեան. 'ի մի վայր ժողովեալ առ Թագաւորն նախարարք և մեծամեծք Հայոց, ազգք 8, տոհմակիցք, գրօշակիցք, տէարք. ամենայն աւագք, կուսակալք, զօրագլուխք, տոհմանաց պետք. եպիսկոպոսունք և երիցունք, և ամենայն խառնաղանջ մարդիկ 'ի մի համանութիւն միաբանութեամբ եկեալ, և առեն ցարքայն Արշակ. վասն զի նորոգեսցէ Աստուած զաթոռ Արշակունեաց քեւ, և զգահ զօրավարութեան քաջ ազգին Մամիկոնենից, նոյնպէս պարտ է նորոգել զաթոռ հայրապետութեն սրբոյն Գրիգորի ազգի, զի լուսաւորեալ պայծառասցին վարք աշխարհիս Հայոց։ Եւ ասէ Թագաւորն. Ես ինքն 'ի խնդիր եմ այդմ գործոյ։

Այս յականէ յանուանէ խնդրէին աշխարհաժողով բազմութիւն զմանուկն Ներսէս զորդի Աթանագինեայ որդւոյ Յուսկան, որդւոյ Վրթանիսի որդւոյ որդւոյն Գրիգորի. և էր նա ի դպրութեանն սնեալ և ուսեալ ի Կեսարիացւոց քաղաքին ընդ հաւատարիմ վարդապետս: Նա էր անուանեալ վասն ժառանգութեան աթոռոյն, և ընդ համեստ անուանց խորոյ կացեալ ամս երեք, որ էր յաղագս Մամիկոնենից, անուն նորա Սանդուխտ. և ի նմանէ ծնի Սահակ: Նա իբրև վախճանեցաւ անուսին իւր՝ եկեալ յաղագական իւր յԱրշակ արքայ, և նա կարգէր զնա սենեկապետ և հաւատարիմ ի վերայ կարգաց 9 թագաւորին: Նա էր նա մեծահասակ և վայելուչ երեսօք և աչագին տեսողաց, երկիւղած յԱստուծոյ և աղքատաց դարմանիչ. և նեղելոց և զրպարտելոց բարեյոյզ ի թագաւորէն. և յինքենէ նէ կերակրէր զորբս և զայրիս. և ի նորա թագաւորին զարմանական մասանցն բարձեալ 10 ամնէր:

Իսկ ժողովուրդն առ հասարակ գներբաքս խնդրէին , զի կարգեսցեն առաջնորդ Հայոց . և իբրեւ ածին առաջի թագաւորին , և լսէր զբարբառ ժողովրդեանն , 'ի մէջ կացեալ սկսաւ խօսել զանձնէ իւրմէ զբամբասանս մեղաց և զանօրէնութեան զոր չէր գործեալ , եթէ անարժան եմ այդմ գործոյ ։ Իսկ իբրեւ լուան բազմութիւնքն , զաղաղակ բարձին և ասեն . Այդ մեղաւորդ և անարժանդ լիցի մեզ հովիւ և առաջնորդ . և նստցի յաթոռ Թադէոսի առաքելոյն և մեծ քահանայապետին Գրիգորի ։ Եւ բուռն հարկանէին զնմանէ ։ Իսկ նա ասէր . Զայր մի մեղապարտ և բիւր չարեօք լի՝ միջնորդ կացուցանէք ընդ Աստուած և ընդ մարդիկ , առ ամօթոյ ձերոյ ասեմ . իշխանութիւն ունիք մահու և կենաց , 'ի ձեռս ձեր կամ . բայց այդմ շնորհի չեմ ես արժանի . ասացէ ձեզ այր ըստ յուսոյ ձերում առուչ և վերակացու ։ Զոր իբրեւ բազմութիւնքն լուան , ծանեան զի

վասն երկիւղին Աստուծոյ խօսի զանձին խղճէ · ապա ամենեքեան առ հասարակ հանդերձ Թադէոսրուն ամբոխն աղաղակէին · ի մեզ և 'ի գլուխս մեր գործցին այն 11 մեղքն զոր դու գործեցեր, և 'ի վերայ անձանց մերոց և 'ի վերայ որդւոց մերոց քո գործքն · բայց դու զերախտացութիւն 12 հարցն քոց նորոգեա 'ի մեզ:

Իսկ Ներսէս երբեւ այլ ինչ ոչ կարաց առնել նոցա պատասխանի, զի 'ի նոյնն պնդեալ կային, 'ի Թշնամանս լինէր զօրացն և ասէր · Անօրէնք էք, պիղծք և տիրատեացք, անաստուածք, տիրադաւանք · լի ամենայն չարութեամբ, քաւք · ընկերատեացք, տիրանենգք, անհնազանդք · և ես ոչ կարեմ ձեզ առաջնորդ լինել · այսօր 'ի տարապարտուց սիրէք զնս, և վաղիւն ատելի և Թշնամի լինիմ ձեզ, և Թագ գլխոյ ձերում կալէք զնս : Զ խաղբանայցեմ զձեռս իմ յաղօԹս առ Աստուած վասն ազգի' որոց ձեռք խուրեանց շաղախեալ են ապա_

նութեամբ անմեղաց . և կամ զիա՞րդ լինիմ առաջնորդ ազգի որ թողին զտէր Աստուած ։ Զայս ամենայն և նման սոյին խօսեցաւ Ներսէս առաջին թագաւորին և իշխանացն և բազմամբոխ ժողովրդոցն ։ Հիացեալ թագաւորն լուռ եւեթ կայր ։ Դարձեալ ասէր . Թո՛յլ տուք ինձ անհոգութեամբ բաւ խմուլ 13 չափու և մեղաց կեալ , և հանդերձեալ դատաստանին ակն ունել հատուցման ։

Եւ ամենայն ատեանն ասէն ցնա . Թո՛ղ մեզ զյանցանս մեր , որպէս եթող տէրն քո իւրոց սպանողացն . զի ոչ այնչափ մեղաք քեզ , որչափ նոքա նմա՝ որ տէրն էր ինքեանց 14 . և դու այդ մեղաւորդ լիցիս մեզ առաջնորդ ։ Այնչափ անդութիւն ամբոխին յԱստուծոյ տեսչութենէն լինէր այնպէս ։ Եւ յարուցեալ թագաւորն հրամայեաց զգիշերն զգուշութեամբ պահել զնա մինչեւ 'ի վաղիւն , զի մի փախիցէ 'ի նոցանէ ։ Եւ 'ի նմին գիշերի հրեշտակ տեառն երեւեալ նմա ասէ . Մի

ընդդիմանալ այդմ առաջնորդու_
թեանդ. վասն զի 'ի տեառնէ հրա_
մայեցաւ քեզ այդ: Եւ նա ասէ.
Տեառն կամք կատարեսցին: Իսկ 'ի
վաղիւ անդր ածեալ Թագաւորն
Արշակ զՆերսէս առաջի իւր և ամե_
նայն ատենին. և յարուցեալ Թա_
գաւորն ինքնին յոյժ ցասմամբ և
յինքն առնոյր զսուրն պողովատիկ
մարգարտակապ կամարաւն, զոր
ունէր Ներսէս 'ի սպաս Թագաւո_
րին. և հրամայէր կապել զնա, և
զպատմուճանն զոր ունէր 'ի յանձ_
նէ Թագաւորին, զայն 'ի բաց հա_
նել 'ի նմանէ:

Եւ հրամայեաց զծեր ոմն եպիս_
կոպոս կոչել, որում անուն էր
Փեստոս, և բերեալ հանդերձս
կղերիկոսականս զգեցուցանել նմա.
և տայր ձեռնադրել զնա սարկա_
ւագ. և զհերս գանգրագեղս Թա_
գանման վարսիցն զայն 'ի բաց մաք_
րէին 15 'ի նմանէ. Իբրև տեսին
զայն բազումք յարտասուս դար_
ձան. զի ոչ ոք գոյր նման նմա 'ի
մարդիկ: Սակայն իբրև տեսին ըղ

շնորհան Աստուծոյ՝ որ ծագեաց 'ի նա խնդալից եղեն. զի գիտէին որ վասն նորա էր ասացեալն 'ի հրեշտակէն ընդ Յովսէփն, թէ Ի զաւակէ քո ծնցի որդի, որ լինիցի անօթ ընտրութեան 'ի մէջ ազգաց. և նա նստցի յաթոռ Թադէոսի և ընու 16 զաւեղի հայոց լուսոյ առաջին հայրապետացն, և ցուցանէ զառաջնորդութիւն կենաց ճանապարհին: Եւ գիտէին զի 'ի տեառնէ էր կոչումն նորա. վասն այնորիկ անդեաւ լինէին ժողովուրդք ազդեցութեամբ Աստուծոյ:

Ապա յետ այնորիկ գումարեցին գունդս բազումս և եպիսկոպոսունս, զի տարցեն զցանկալին Ներսէս 'ի Կեսարիա, ուր սովոր էին զհայրապետսն ձեռնադրել օծմամբ: Թագաւորն աշխարհախոր 17 գաւառութեամբ կազմէր և արձակէր զօրս զհետ նորա. զզօրավարն Շահէն 'ի Մամիկոնէից տոհմէ, և այլ իշխանս յիւրաքանչիւր նահանգէ. զիշխանն Բագրատունեաց Դաւիթ, զիշխանն Խորխո-

ունեաց Հմայեակ 18 , զիշխանն Արծրունեաց Սահակ , զիշխանն Գնունեաց Մանէճ 19 , զիշխանն Վարաժնունեաց Տիգրան , զիշխանն Ամատունեաց Վաչէ . և զգաւառակալս աշխարհին , զիշխանն Տարօնոյ զՄուշեղ , զՎաչուկ իշխանն Վրաց , զՎրէն իշխանն Գողթեան , զՎառէն իշխանն Մախազութեան տանն , և զՀայր Մարդպետութեան տանն , որ թագաւորահայրն կոչէն . զՄախազ իշխանն Անձեւացեաց , զՋարեհ իշխանն Մոկաց , զՄուժան 20 իշխանն Աղձնեաց , զՄեհենդակ իշխանն Ռշտունեաց , զՎարազդ Շահունի իշխանն Ծոփաց , զՎաղարշ իշխանն Անձայ , զՎարազվաղան իշխանն Գաբեղենից , զԳնիթ իշխանն Հաշտենից , զՍադ 21 իշխանն Բասենոյ , զԱնդուկ իշխանն Սիւնեաց , զՄանաւազ իշխանն Ձորոց աշխարհին , զԱրտակ իշխանն Հարքայ , զԱրշաւիր իշխանն Անկեղ տան , զԳազրիկ իշխանն Տայոց ։ Ընդ նոսին և եպիսկոպոսք մեծամեծք . զԳրի-

զոր եպիսկոպոս Սիւնեաց , զփառէն եպիսկոպոս Վրաց , զԹաթուլ եպիսկոպոս Տարօնոյ , ըզՅովսէփ եպիսկոպոս Բագրատունեաց , զՔաջաջ եպիսկոպոս Մարդպետական , զԱմոս եպիսկոպոս Բզնունեաց , զՆերսէս եպիսկոպոս Մոկաց , զՇապուհ եպիսկոպոս Արծրունեաց , զԱրեստամ եպիսկոպոս Ընձեւացեաց , զՎաչան եպիսկոպոս Մամիկոնենից , զՋաւէն եպիսկոպոս Տրտաւայ , զՏրդատ եպիսկոպոս Բասենոյ , զԳնէլ եպիսկոպոս Մելտենեայ : Եւ այլ հինգետասան եպիսկոպոսք՝ որ պատրաստեցան ընդ իշխանն . և այլ կուսակալք և պետք աշխարհին Հայոց՝ Թղթով Թագաւորին Արշակայ և ընծայիւք նորին :

Նստուցին զՆերսէս յաթոռական կառսն սպիտակաձիգս ջորւոց մեծ պատուով . և ընդ նմա հեծեալս չորս հազարս : Զոր իբրեւ 'ի բացեայ տեսանէին զնոսա գաւառքն՝ 'ի փախուստ դառնային , կարծելով եթէ գունդք Թշնամեաց են . այլ իբրեւ

խմանայն՝ բաղում հիւրամեծարու-
թիւն տանէին նոցա իշխանք գա-
ւառացն ։ Եւ նոցա զբաղում օթե-
վանօք զանց արարեալ, հասանէին 'ի
սահմանս Գամրաց 'ի մայրաքաղաքն
Կեսարիա ․ և հանդիպէին եպիսկո-
պոսին մեծին Եւսեբեայ, և տային
զհրովարտակն Արշակայ թագաւո-
րին, հանդիպեցուցանէին նմա ըզ-
Ներսէս ։ Իսկ երանելի արքեպիս-
կոպոսն մեծ պատուով և սիրով ըն-
կալաւ զնոսա, և անյապաղ ըստ
առաքելական կանոնացն՝ ժողո-
վեալ բաղում եպիսկոպոսունս
Յունաց աշխարհին, զի ձեռնադրես-
ցեն զմեծն Ներսէս բազմամբոխ
հանդիսիւ կաթողիկոս Հայոց մե-
ծաց 'ի վիճակ առաքելոյն Թա-
դէոսի ։

Արդ իբրեւ մտանէին յեկեղե-
ցին՝ մեծ պանծալիք երեւեցաւ ․ Ի-
ջանէր աղաւնի մի սպիտակ յերկնից
մարմնաւոր տեսլեամբ, և նստաւ 'ի
վերայ սեղանոյն սրբութեան յան-
դիման ամենայն քահանայութեանն
և բազմամբոխ ժողովրդեանն ․ և կայր

անդ երիցապետ մի Կեսարու եկե-
ղեցւոյն, որում անուն էր Բասիլ.
վերացեալ աղաւնոյն կայր 'ի վերայ
նորա: Եւ իբրեւ հանէին զսուրբն
'Ներսէս 'ի բեմն, թռեալ աղաւնին
և եկեալ նստաւ և հանգեաւ 'ի վե-
րայ գլխոյն 'Ներսիսի, մինչեւ կատա-
րեցին զսուրբ ձեռնադրութիւնն:
Եւ իբրեւ այն նշան սքանչելեաց
լինէին 'ի վերայ նորա, ապա և ինքն
հայրապետն իսկ Եւսեբի՝ զբազում
ժամս հիացեալ կայր. և ամենայն
ժողովուրդն աղաղակէին, թէ այրս
այս արժանի է քահանայապետու-
թեան, վասն զի հանգեաւ Հոգի
Աստուծոյ 'ի վերայ նորա, որպէս
'ի Յորդանան 'ի վերայ Փրկչին. և
որպէս 'ի վերնատունն յառա-
քեալսն: Եւ կուտէին 'ի վերայ
բազմութիւնք ժողովրդոցն, զոր
հազիւ ուրեմն կարէին մեկնել 'ի
յեկեղեցւոյն զօրքն Հայոց. որք էին
ընդ սորայն 'Ներսիսի: Եւ մտա-
նէին 'ի ժամ Ճաշոյ. և սուրբ քա-
հանայապետն 'Ներսէս մտանէր 'ի
պատարագ. և տեսանէին 'ի հե-

աստանէ, զի հրեղէն սիւն յերկնից իջանէր 'ի վերայ եկեղեցւոյն՝ ուր զպատարագն մատուցանէր Ներսէս. լսէին և ձայն երկնաւոր զօրաց, որք երեքսրբեան օրհնութեամբ 'ի սպասու կային նմա: Եւ յետ արձակման Ճաշուն նստէին 'ի ճաշ. և տեսանէին զի լուսաւորեալ էին երեսք մեծին Ներսիսի որպէս զնախամարգարէին Մովսէսի 'ի լերինն. և ընդ այն առաւել զարմանային տեսողքն:

Եւ յետ այսր սքանչելեացս մեծ պատարագօք և ընծայիւք յիշխանացն Յունաց և յերանելի եպիսկոպոսէն Եւսեբէ, ելանէին 'ի ճանապարհ զօրքն Հայոց քահանայապետովն իւրեանց: Իսկ աշխարհն Յունաց և Ասորւոց և այլ սահմանք որ լսէին զսքանչելիսն՝ որ եղեւ 'ի վերայ մեծին Ներսիսի, ելեւելս առնէին զհետ նորա, զի օրհնեսցին 'ի նմանէ. և գային ընդառաջ նորա տեսանել, թէ Սա այն այր է որ Հոգին սուրբ աղաւնակերպ յայտնեաց 22 զսա Ջմարխ

քահանայապետս ։ Եւ բազում բո-
րոտք և հաշմանդամք և ախտաժետք
և այսահարք բերէին առաջի նորա,
և գտանէին ՚ի նմանէ առողջութիւն.
և ամենայն ազգք երանի տային աշ-
խարհին Հայոց վասն նորա ։

Իսկ ՚ի Սեբաստիա բազում օ-
թեվանս արարեալ սրբոյն Ներսի-
սի, և հիմնարկեալ անդ եկեղեցիս
յոլովս ։ Եւ անդէն իշխանս ութ
յառաջ յղարկեցին աւետաւորս
առ Արշակ թագաւորն. որ եկեալ
հանդիպեցան նմա յԱյրարատեան
գաւառին. իշխանն Անգեղ տան,
իշխանն Ծոփաց, իշխանն Արշարու-
նեաց, իշխանն Բագրատունեաց,
իշխանն Անձաւաց, իշխանն Արծրու-
նեաց, իշխանն Մամիկոնէից. իշ-
խանն Ռշտունեաց ։ Այսոքիւք 23
ելանէր արքայն Արշակ ընդ առաջ
սրբոյն Ներսիսի աշխարհագումար
ամբոխիւ, մինչև յԱւեւծ լեառն ։
Եւ հանդիպեալ միմեանց թագա-
ւորն և կաթողիկոսն, և եղև ու-
րախութիւն յոյժ աշխարհին Հայոց ։
Եւ բերեալ նստուցին զնա յաթոռ

սրբոյ առաքելոյն Թադէոսի և Նախնոյն Լուսոյ Գրիգորի . և նորոգէր աթոռ և վիճակ Հայոց մեծաց և աքանազեան տոհմին :

Դ . Առնէր և ուսուցանէր ըստ աւետարանին բանի . օրէնս 24 բարեաց ցուցանէր զանձն իւր աշխարհիս Հայոց սուրբն Ներսէս :

Բայց առաջին զպատճառս ձեռնադրութիւն առնլոյ Հայոց 'ի Կեսարացւոց . վասն զի յորժամ վիճակեցաւ աշխարհս Հայոց Թադէոսի առաքելոյ , և եկեալ Նախ առ Աբգար արքայ յՈւրհայ և լուսաւորեալ զնոսա . և զի էր հանապազ լեալ Կեսարիա ընդ Հայոց իշխանութեամբ , և մնեալ անդ առաքելոյն Թադէոսի լուսաւորեաց զնոսա և ձեռնադրեաց զմի ոմն յաշակերտաց իւրոց քահանայ և եպիսկոպոս , որում անուն էր Թէոփիլոս . զոր եթող առաջնորդ նոցա և ինքն գնաց 'ի Հայս : Այնր պատճառ առնուին ձեռնադրութիւն Հայք 'ի Կեսարիա , մինչև 'ի ժողովն Քաղկեդոնին :

Ե. Եւ երբեւ ձեռնադրեցաւ Մեծն Ներսէս 'ի Կեսարիա, և եկեալ 'ի Հայս նորոգէր զգահս իշխանացն Հայոց, զոր էր կարգեալ 'ի Խոսրովայ և յայլ Թագաւորացն։ Զնոյն և նա կարգէր 'ի ժամ ճաշոյն 'ի սեղան արքային Արշակայ, բարձս չորեքհարիւր, որ են այսոքիկ 25.

Հայկազնեք.
Պարթեւեանք.
Արշարունեանք.
Բագրատունեք.
Տրդատունեք 26.
Ապեղունեք.
Մախազունեք.
Խորխոռունեք.
Արծրունեք.
Մամիկոնեանք.
Սիւնեցիք.
Ամատունեք.
Ընդեղեանք 27.
Վրացիք.
Ծոփք.
Վարաժնունեք 28.

Մարդպետունիք 29 .
Վահեւունիք .
Պահլաւունիք 30 .
Կողբք 31 .
Սիսանեանք 32 .
Կադմեանք 33 .
Մանաւազեանք 34 .
Եգեսեանք .
Գամբեանք 35 .
Բզնունիք .
Սասանեանք .
Գիսանք 36 .
Եկեղեանք 37 .
Քաւպետունիք 38 .
Ընձաեայք .
Ներսասեանք .
Աշտիշատեանք .
Սրուանձտեայք 39 .
Ընձաւացիք .
Ապահունիք 40 .
Որշտունիք .
Վահանունիք .
Աղձնեանք 41 .
Քողեանք 42 .
Կաղբունիք 43 .
Կամսարականք .

Մոկացիք ·
Սղկունիք 44 ·
Քնթունիք 45 ·
Առրպատունիք 46 ·
Գողթնեայք ·
Գազրիկանք ·
Ձողկերաք ·
Մախազեանք 47 ·
Մրուունիք 48 ·
Ռազմունիք 49 ·
Գաբեղեանք ·
Սպարունիք 50 ·
Վահունիք ·
Վրընջունիք ·
Սուրեանք 51 ·
Դիմակսեանք 52 ·
Սրունիք 53 ·
Դարբանդեանք 54 ·
Արագածեանք ·
Կոդովսեանք 55 ·
Ապահունիք ·
Ընծայնոցք ·
Հարքեանք ·
Կորդուայք ·
Առաւեղեանք ·
Հաշտեանք ·

Վրեանք ·
Վանանդեանք 56 ·
Փառաճունիք 57 ·
Տաշրացիք 58 ·
Ուրծեայք 59 ·
Մանդակունիք ·
Տայք ·
Մեղխեանք 60 ·
Դաշտակարնիք 61 ·
Բասենք ·
Ծաղկունիք ·
Մամիկոնք երկրորդ ·
Փերէժունիք 62 ·
Տլքեանք 63 ·
Բագուանք ·
Աշոցեանք 64 ·
Արեղունիք ·
Խաղտեանք ·
Սահառունիք ·
Աշխադորեանք 65 ·
Գնունիք ·
Համոզդունիք 66 ·
Ակեայք ·
Վիժունիք ·
Առոփունիք 67 ·
Շահառապետք ·

Ծայթիւնք 68 .
Զանահճիրապետք 69 .
Վարազատակեանք 70 .
Ընծայենիք 71 .
Մզրունիք .
Արշունիք 72 .
Քաւեանք 73 .
Մարդաղեանք .
Լեկանդեանք .
Խորձենիք 74 .
Ձիւնականք .
Համուծեանք 75 .
Կորթեանք 76 .
Կղունդիք .
Զարեւհանք 77 .
Տուրբերանեանք .
Բժնունիք 78 .
Տփխունիք .
Մեհրունիք .
Քաղաքապետք .
Կայուշեանք 79 .
Սպանդունիք .
Առաւաշատեանք 80 .
Որսապետք .
Աղբածոց տեարք 81 .
Ռափսեանք 82 .

Բագրատունիք 83 .
Պարսպունիք 84 .
Աղեձնադրօշք .
Գրչունիք .
Նետողք .
Նամակունիք .
Բաղուեանք 85 .
Ապարախաղք 86 .
Աբրահամեանք .
Հիւսնականք 87 .
Բաղաստականք .
Ծիլք .
Լեառնականք .
Սապրաստմեանք .
Հեճմտակք 88 .
Գորողուայք 89 .
Վարդեչեանք 90 .
Դրամանդք 91 .
Խաչեանք .
Խաղբեանք 92 .
Դրօշակիրք .
Մախայունիք 93 .
Ոսկեմանիք .
Արուժեանք 94 .
Կապարճք 95 .
Տաթեւեանք .

Գատամձիաք .
Զորաբնակք .
Ճակատամուգք 96 .
Գերջայինք 97 .
Շահապունիք .
Բարմեայք 98 .
Կամխեայք 99 .
Գաւառապետք 100 :

Եւ այլ որք չէին ՚ի գահս .
Ցուրթպեանք 101 .
Փոքայունիք 102 .
Մուացեանք 103 .
Առեկունիք .
Խնունիք 104 .
Բագնունիք 105 .
Ագնեւունիք 106 .
Ցլիւրանեանք 107 .
Կգնունիք 108 .
Տուչունիք 109 .
Կռունիք .
Մագնունիք 110 .
Մախազունիք :

Այս են գահոյք և այլ եւս յոլով, զոր ծանր համարեցայ արկանել ընդ գրով 111 . զոր Նորոգեաց

Արշակ Թագաւորն և կարգեաց 'ի ժամ ճաշոյն իւրոյ 'ի սեղան իւր՝ բարձս չորեքարիւրս՝ հրամանաւ մեծին Ներսիսի : Իսկ 'ի Թիկանց կուսէ նստէին եկեղեցականք, դասս ինն :

Զ. Արդ յառաջ քան զձեռնադրութիւն մեծին Ներսիսի վանականք և եպիսկոպոսք և միայնակեացք 'ի քաղաքս և 'ի գեղջից միջի բնակէին առ ընտանիս. զոր անվայելուչ և անպատշաճ համարեալ մեծին Ներսիսի : Ապա անդէն մուծանէ 'ի Վիրս, 'ի վիճակ առաքելուհւոյն Նունէի. և անտի գայր անցանէր 'ի Յոյնս և 'ի սահմանս Պարսից : Եւ տայր հրաման շինել եպիսկոպոսանիստս և եղբայրանոցս մեծամեծս և փոքունս 112, և հրամայէր 'ի զերծ տեղիս և յանցս ճանապարհաց և 'ի գլուխս լերանց պանդոկս շինել, և հիւրանոցս 'ի քաղաքս և յագարակս : Եւ կարգեաց 'ի վանորեայս զշիրիմս Թագաւորացն և զիշխանացն և զզօրավարացն, զի ընտանեբար հոգայցեն

զնոսա . և բաժանեաց յեղբայրս-
նոցին զեօղս և զաստակերտս ՚ի
մխիթարութիւն նոցա . և ոչ ըզ-
ատեանէր յաշխարհին Հայոց մա-
րացիկ յառաջին ՚ի Ներսիսի .

Նա այլ անուղղայ կարգս և անօ-
րէնս մահաբերս յերկիրս Հայոց
՚ի բազում ժամանակաց ունէին ,
զոր եբարձ սուրբն Ներսէս . զի
զբորոտս՝ որ պղծակս անուանի
և զուրուկս հալածէին յանդիման
մարդկան , զի մի յայլս փոխեսցի
ախտն . և նոցա հիւանդացն յըն-
տանութեան և յեղբայրութեան և
՚ի հարց և յամենայնցս . և ընկերտաս-
նաց տարաբէն տուն այսր պատմա-
ռի , և բազում լինէին զազանա-
կութք , գեռանդեալք , ձիւնահեղք ,
և անդ ի... կորնչէին . Այդ մեծն
Ներսէս ածէր զնոսա յերբաքան
չէր տանն , և ոչ տայր հալածել
զնոսա որպէս զազանսն . Նա յետ
այսորիկ տանել զնոսա ազդեցու-
թեանս սուրբ Հաւատոյն և տարաւ ՚ի
գաւառն Սնձեցւոց ՚ի պատկեր
որոց Աստուածածնին 113 , զոր էր

բերեալ առաքելոյն Բարթողոմէո_
սի և շինեալ զեկեղեցին 'ի նոյն ան_
ւանս յանուն նորա ։ Եւ զաւանէին
բժշկութիւն ախտին այնմիկ, և այ_
լոց եւս ցաւոց, և հաստատէր
զախոտ 'ի անդուղն յայնմիկ, որ
կատարէին ամ յամէ մինչև ցայս_
օր 'ի փառս Աստուծոյ. և բազմին
յախտէն բորոտութենէ ։

Եւ ինքն Ներսէս շրջէր ընդ գա_
ւառս՝ ամս քսանևհինգ 114, որ
էր միանձնեալ. և հաստատէր և որ_
ծածէր զկարգս եկեղեցւոյ սրբոյ.
և լինէր ուրախութիւն մեծ Հայոց ։
Եւ բազումք յոլովագունեաց գաւառոյ_
ին 'ի Հայս և լուսաւորէին աւա_
ռանն ։

Եւ եղեւ 'ի շրջելն Ներսէսի յա_
մենայնից գաւառին յԱյրարա_
տեան, հանդիպեցաւ 'ի նմին գա_
ւառի Թագաւորահայոյն Մարդ_
պետ. և տեսեալ զգաստակերան
մեծ զոր էր առեալ Ներսէս 'ի
մանուկ իւր, շարակնեալ Մարդպետն
ան. Թէ հանից առ Թագաւորն՝
յղբունիս անից զանգիս ։ Զոր

լուեալ ՚Ներսիսի ասէ․ Վասն սպառնալոյ քո ոչ հասցես առ Թագաւորն։ Իսկ 'ի գնալն իւրում պատահեաց նմա իշխան մի յԱրծրունեաց տոհմէն, և պատճառաւ որոյ սպան զՀայր Մարդպետն․ և կատարեցաւ բան առնն Աստուծոյ սրբոյն ՚Ներսիսի․ և ամենեքեան զարմանային ընդ արագ կատարումն բանից նորա։

Դարձեալ զի և այլ հեթանոսական օրէնք վարէին Հայք․ զի 'ի վերայ մեռելոց անյուսութեամբ ցաւէին զերեսս և արեամբ ապականէին․ և այնպէս յուղարկէին ըզմեռեալս։ Եւ վասն զի ընդ ընտանիս և մերձաւորս արեան ամուսնանային յաղագս սեպհական ազատութեան և հայրենեաց, իսկ մեծն ՚Ներսէս եբարձ զայն 'ի Հայոց․ և հրամայեաց մինչև հինգ 115 ազգն ոչ ամուսնանալ։ Եւ լինէր ամենայն Հայք իբրև զմի անձն յաւուրս երանելւոյն ՚Ներսիսի․ զի ինքն լինէր օրինակ բարեաց ամենայն աշխարհի, մչակ առանց ամօթոյ։

Է. Յետ այսր ամենայնի դուստր
մի էր Անգղեկայ Միհնեայ իշխա_
նին, որում անուն կոչիւր Փառան_
ձեմ, և տուաւ յամուսնութիւն
Գնելոյ Արշակունւոյ եղբօրորդ_
ւոյ Արշակայ արքային և սիրէր
համբաւ գեղոյ նորա ընդ աշխարհն.
զի ոչ գոյր նման նմա ՚ի կանայս,
և համեստ և այրասէր: Արդ իբրև
ետես Տիրիթ եղբօրորդին Արշա_
կայ զհարսն իւր զՓառանձեմ, հա_
րաւ ՚ի սէր նորա. և խնդրէր հնա_
րս կորուսանել զպատանեակն ըզ_
Գնել. զի առցէ զՓառանձեմ իւր
՚ի կնութիւն: Յարեկցոյց յինքն Տի_
րիթ և այլ չարախորհ մարդիկ, որք
ստութիւն 116 մատուցանէին զաւա_
նէն առ Թագաւորն, եթէ Պատա_
նեակն Գնել խորհի սպանանել
զքեզ: Եւ Թագաւորն հաւատաց
ստորանիցն. և նիւթէր բարկու_
թիւն ՚ի սրտին սպանանել զպատա_
նեակն Գնել. բայց ոչ իշխէր յայտ_
նել համարձակ ՚ի սրբոյն Ներսիսէ:

Իսկ յաւուր յիշատակի Կարա_
պետին Յովհաննու, զոր էր կար-

գեալ Լուսաւորիչն Գրիգոր, ժո-
ղովէին 'ի գաւառն Գառնոյ 'ի Շա-
հապիվան, և բանակն արքունի.
ընդ նոսին ածէին և զմեծն ներ-
սէս յաղագս կատարման տօնին:
Յայնմ աւուր գայր պատանեակն
Գնէլ ընտանեօքն իւրովք: Արդ
իբրեւ լուաւ Թագաւորն առա-
քեաց ընդ առաջ նորա գունդս վա-
ռեալս սուսերաւորս վահանակիրք
հետեւակաց. և հասեալք ընկեցին
զպատանեակն Գնէլ յերիվարէն,
և կալեցին զձեռս յետս, և տա-
րան 'ի տեղի սպանման: Իբրեւ ե-
տես Փառանձեմ կին նորա, ճիչ
երարձ և ընթացաւ առ սուրբն ներ-
սէս՝ ուր զպաշտօնն կատարէր, և
գեռ առաւօտին աղօթքն չեւ էր
կատարեալ. և Փառանձեմ մեռեալ
գոյժ արկանէր զկորուստ առն իւ-
րոյ, ձայն բարձեալ և բուռն հար-
կանէր զոտից սրբոյն ներսիսի, և
արտասուօք թանայր և ասէր.
Վա՜յ, կորեաւ անձն իմ. ողորմեա
սուրբ քահանայապետ. զպատա-
նեակն Գնէլ զոր դուն սիրէիր,

զամուսինն իմ, առանց իրիք յան_
ցանաց կորուսանել կամին. կեն_
դանի է տէր, ոչ թողից զգարշա_
պարս քո, մինչեւ ցուցցես խառա_
բեալ աչաց իմոց զսրբութեամբ ա_
մուսինն իմ զպատմանեակն գնել:
Վա՜յ հասիր սուրբ հայրապետ,
վա՛յ հասիր, զի զմատաղիկ ուռն
հատանեն 'ի յորթոյ. վաղ հասիր,
զի խողխողեն զորդարն 'ի տարա_
պարտուց. վա՜յ հասիր սուրբ հայ_
րապետ անօգնականին գնելոյ. վա՜յ
հասիր սուրբդ Աստուծոյ, զի գառն
անմեղ 'ի մէջ գայլոց տարակու_
սեալ անակնած 117. և ոչ գոյ հո_
վիւ զի օգնեսցէ պատանեկին. և
գաղանքն ոչ ողորմին նմա:

Իսկ սուրբն Ներսէս յարտասուս
եղեալ՝ խափանէր զպաշտօն առա_
ւօտուն, արագ ընթանայր առ թա_
գաւորն 'ի խորանն արքունի. և
փառանձեմ բուռն հարկանէր ըղ
հանդերձէն և զգաւազանէ նորա,
և փութացուցանէր զնա: Իսկ
սուրբն Ներսէս հրամայէր նմա
կալ 'ի տեղւոջն. զի մի տեսեալ

զգեղեցկութիւն նորա թագաւորն՝
խափան լիցի բարեխօսութեանն
վասն Գնելոյ։ Իսկ յորժամ տեսին
բանակին զՆերսէս՝ յիւրաքանչիւր
խորանաց երթային 128 ընդ առաջ
նորա. և նորա ընթացեալ ընդ մէջ
նոցա՝ փութով հասանէր առ թա-
գաւորն։ Եւ թագաւորն գիտա-
ցեալ եթէ ՚ի բարեխօսութիւն
գայ վասն Գնելոյ զի մի մեռցի,
անդէն քող զգլխովն արկեալ քնոյ
պատճառանօք դարձուցանէր զե-
րեսն, զի մի լուիցէ զբարեխօ-
սութիւնն՝ մինչեւ սպանցեն զԳնել։
Իսկ նա բուռն հարեալ զձեռաց
թագաւորին յառաջ ձգէր ՚ի գա-
հոյիցն, և նա թուլանայր իբրեւ
զմեռեալ և զաչսն խփնայր 119։ Եւ
անդէն յարուցեալ սրբոյն Ներսէ-
սի ընթանայր իբրեւ զսուրհանդակ,
զի լինիցի հասցէ Գնելոյ, և երկիվար
ձայնէր։ Իբրեւ եղանէր ընդ բա-
նակն՝ գայր հասանէր գահճա-
պետն, մտանէր ՚ի բանակն ասելով
թէ Կատարեցաք զհրամանս թա-
գաւորին, ես և որ ընդ իմն էին, և

սպանոյք զպատանեակն Գնել 'ի սարակ լերինն, մօտ 'ի յորմ՝ արգելոցի երկոյն որոց ։

Իբրեւ լուաւ մեծն Ներսէս, ուժգին տրտմութեամբ ընթացաւ 'ի խորանս թագաւորին՝ եւ ասէ. Անիրաւ թագաւոր, դու իբրեւ զօձ եւ զքարբի խցեր զականջս քո եւ ծածկեցեր ընդ անդամով քո ըղգլուխդ՝ որպէս նոքա, զի մի ապացին յորսողաց, զոր ոչ օգտեցին. այնպէս եղեր եւ դու. եւ ոչ լուար ինձ եւ ոչ խնայեցեր յորդի եղբօր քո եւ 'ի ծառայակիցն եւ 'ի հարազատն քո ։ Արդ նա որ կամաւ եղեւ եղբայր մեզ՝ ոչ խնայեսցէ քեզ յաւուր նեղութեան քո ։ Եւ դու վասն անթառոյ ժառանգութեան սպաներ զԳնել. արդ ճեղքեսցի թագաւորութիւն ձեր իբրեւ զիսրայելին, ցրուեսցին սահմանք ձեր 'ի ձեռս օտար թշնամեաց. մատնեսջիք 'ի գերութիւն, 'ի սով եւ 'ի սուր, եւ մի պակասեսցէ լուծ ծառայութեան 'ի պարանոցէ ձերմէ. եւ ըղվատակս ձեր եւ զաշխարհս ձեր օ-

տարք կերիցեն . և 'ի խարխափելոց
տերևոց փախիջիք դուք . անար-
գեսջիք երբեւ զջուր հեղեալ . և 'ի
լարել աղեղան տկարասջիք . ըմբել
ազգիդ Արշակունեաց զյետին բա-
ժակն , արբջիք և արբեսջիք . կոր-
ծանեսջիք և այլ մի կանգնեսջիք :
Եւ առ ժամանակ մի ներեսցէ ձեզ
Աստուած վասն աշխարհիս օգտի-
տալ յետ այնորիկ բարձցէ 'ի ձէնջ
զթագաւորութիւնդ ընդ նմին և
զքահանայութիւնդ . և անտե-
սուչք 120 շրջեսջիք յաշխարհի որ-
պէս հօտ որոյ ոչ իցէ հովիւ : Եւ
դու որ սպաներ զեղբայր քո ըղ-
Գնէլ, եւ զգործ Կայենի գործե-
ցեր, զանէծս Կայենի ժառանգես-
անկցիս կենդանւոյն 'ի թագաւո-
րութենէդ քումմէ , և չարչարե-
ցիս դու առաւել քան զհայրն քո
Տիրան . և սպանցիս դու 'ի ձեռաց
քոց երբեւ զՍաւուղ և երբեւ զՀե-
րովդէ սրով և դառն մահուամբ ել-
ցես յաշխարհէս :

Զայս ամենայն և որ այցին նման
էր՝ խօսեցաւ սուրբն Ներսէս , և

Թագաւորն իբրեւ զԹմբրեալ ամօԹալի ընդ գետնին հայէր . եւ յարուցեալ մեծն Ներսէս այլ ոչ եմուտ 'ի բանակն արքունի . այլ ընԹանայր շրջէր ընդ գաւառս Վասպուրականի , եւ հաստատէր զկարգս եկեղեցւոյ . եւ անտի հեռանայր Կ 'ի Վիրս , եւ անդ նորոգէր եկեղեցիս յոլովս :

Իսկ ամուսինն պատանւոյն Գնելայ 'ի բանակին արքունի ձայն արձակէր եւ յաղի ողորմ լայր ողբովք զայր իւր , եւ առ հասարակ զամենեսեան ողբակից առնէր : Եւ ՏիրիԹն պատգամ առաքէր առ նա , Թէ Մի՛ այլայլեր զքեզ . զի ինձ պահեսցի անձն քո : Իբրեւ լուաւ փառանձեմ ողբս արձակեալ ասէր . Ո՛վ մարդիկ լուարուք . զի վասն իմ Թշուառականիս եղեւ կորուստն իմոյ : Եւ Թագաւորն Արշակ 'ի Ձիչ փառանձեմայ եկեալ , եւ տեսեալ զնա՝ արփոյցաւ 'ի գեղեցկուԹիւն նորա : Եւ ՏիրիԹն իբրեւ լուաւ՝ փախեաւ զի մի սպանցի 'ի Թագաւորէն . եւ նա առաքեաց զօրս

զկնի նորա , և հասեալ սպանին զնա
'ի գաւառն Տայոց ։ Եւ առ Արշա
զփառանձեմ իւր 'ի կնութիւն , և
ծնաւ փառանձեմ յԱրշակայ եր-
կուս որդիս . և եդ անուն առա-
ջնոյն Պապ և երկրորդին Տրդատ ։

Իսկ սուրբն Ներսէս աղօթիւ
սպան զսպանողն Գնելոյ , և զգա-
ւողն յետ մահուն . և ասէր այս-
պէս , թէ Ձեռք որ շաղախեցան
յարիւն և լեզուք որ խօսեցան
սուտ զԳնելոյ առ Թագաւորն ,
հող օրհնութեան մի ծածկեսցէ
զնոսա . այլ մնասցեն մինչև եկես-
ցէ դատաւորն և արասցէ իրաւունս
'ի միջի նոցա ։ Եւ կան մարմնով
մինչև ցայսօր ըստ բանի առն Աս-
տուծոյ 'ի գաւառին Գառնոյ 'ի
դժուարս այրից 121 ։

Ը . Իսկ փառանձեմ առեալ
զԱրշակ Թագաւորն , և նազելով
խօսէր ընդ նմա . և այնքայն Արշա
տեսեալ զանելութիւն իւր , առա-
քէ 'ի Յոյնս և ետ բերել իւր կի
զքոյր Թագաւորին Վաղէսի , ո-
րում անուն էր Ողոմպիա , և կա-

կեաց Թագ ընդ նմա, և առաւել սիրէր զնա քան զՓառանձեմ։ Իսկ Փառանձեմ ոխացեալ ընդ Ողոմպի և հնարէր կորուսանել զնա. և եգիտ իւր խորհրդակից զգլխան երկցունն, որում անուն էր Մրջիմնիկ. իսկ Մրջիմնիկն գործեաց նոր չարխաղաւն զի խառնեաց զդեղ մահուն 'ի կենաց դեղն 'ի փրկական խորհուրդն, և ետ յեկեղեցւոջն Թագուհւոյն Ողոմպի և սպան զնա։

Իբրև լուաւ Թագաւորն զմահ քեռն իւրոյ, խորհէր պատերազմ առնել 'ի մէջ Հայոց և Հոռոմոց 122։ Իսկ իբրև գիտաց արքայն Արշակ, եթէ թշնամիք են նորա Թագաւորն Պարսից Շապուհ և Թագաւորն Յունաց Վաղէս, յարուցեալ իւքն զօրքն 'ի խնդիր երանելւ մեծի կաթողիկոսին Ներսէսի յԱշտիշատ Տարօնոյ. և անկանէր Թագաւորն յոտս սրբոյն Ներսիսի, և հայցէր զթողութիւն յանցանաց իւրոց, և յայնմ հետէ գնալ ըստ կամաց նորա 123։ Եւ եպիսկոպոսունք աշխարհին նորին

ապաւրաւ հայցէին , ընդ Նոսին եւ իշխանքն , զի մի՛ անփոյթ արարե զիւրոյ վիճակէն : Եւ որոյն հաւանեալ 'ի խաղաղութիւն գաւառաց 'ի մի հաւանութիւն եկեալ զի գնասցէ ինքն եպիսկոպոսապետն Ներսէս այլ Նախարարքն առ Վաղէս Թագաւորին Յունաց , զի հաստատեսցեն զդաշինսն՝ զոր եդեալ էին մեծամեծ Թագաւորք ընդ միմեանս , որոյն Կոստանդիանոսի եւ որոյն Տրդատայ , եւ Լուսաւորչին մերոյ որոյն Գրիգորի , առնել կալ ընդ միմեանս :

Այս կամեցին պատրաստեցին մեծամեծացն Հայոց աշխարհս , էին այսոքիկ . Վարդան Մամիկոնեան եւ եղբայր Վասակայ . Գաջող մանկադն՝ Նահապետն Խորխոռունեաց , Մուշկան 124 Նահապետն Ապահունեաց , Գնել Նահապետն Գնունեաց , եւ Վաչէ Նահապետն Բառնէից , Մեհեւան Նահապետն Անձեւացեաց , Մեհենդակ Նահապետն Ռշտունեաց , Մարիկ Նահապետն Գաբեղենից , Մե-

րուժան նահանգեան Եփրատեսեայ , Իսաւրոս նահանգեան Իսաւրիա-նեայ , Վրէն նահանգեան Վրայ , Խումէն 125 նահանգեան Նոփայ , Սպանդիոս 126 նահանգեան Մե-լիտենիոյ , Յունակ նահանգեան Հռչակենից , Մագուգ նահանգեան Արտաշատականի , Վզուկ նահա-գեան Իսաւնոյ , Ոսկղէս նահա-գեան Վրայ , և հայր Մարգարեան : Սորա ամենեքեան չոգան դեսպա-նութեամբ ընդ Մծբին Ներսիսի 'ի կայսերական պալատն՝ սիրոյ ազա-գաւ և զզուշինան հաստատելոյ , որ էր ընդ Հայս և ընդ Հոռոմս :

Իսկ Թագաւորն Վաղէս զառա-ջինն Մծբնեաց յոյժ զխախտարան Հայոց Մծբայ , և եդ զաթոռ Մծ-բին Ներսիսի 'ի վեր քան զՄեղրա-պօլսայն և քան զպատրիարքն , վասն բարենշան առն Աստուծոյ սրբոյն Ներսիսի . և որ բան որէ յա-ժեղքի 'ի սէր և 'ի պատիւ : Բայց էր Թագաւորն Վաղէս խմորեալ անհնարին հերձուածով բաս Ա-րիոսի , ոչ խոստովանելով զՈրդի

հաւատար Հօր, և ոչ ծնեալ ՚ի
Հօրէ յառաջ քան զյաւիտեանս
այլ ստար և արարած և կրսեր
յետ ժամանակի գոյացեալ. և ըն
ուրբ կոյսն Մարիամ՝ ոչ ա
տուածածին՝ այլ մարդածին՝ ը
հոգեմարտին Մակեդոնի, որ ո
ւէր խոստովանէր զՀոգին սուրբ
ոչ երկրպագելի և ոչ փառաւորեա
ընդ Հօր, և ոչ էութիւն անձն
ւոր, այլ ստար ՚ի բնութենէ Ա
տուծոյ Հօր, և ստացական և ծ
առայ և պաշտօնեայ և ազդումն ին

Իսկ որդի մի էր Վաղէսի արամ
անուն էր Տրայիանոս, որ ն
միայն գտանէր ժառանգ թագաւո
րին յազգի իւրում. և այնուհետ
գնէր յախտ հիւանդութեան սաս
կացեալ: Եւ թագաւորն առաք
զսուրբն Ներսէս՝ զի աղօթս ա
րասցէ ՚ի վերայ մանկանն զի մ
մեռցի. իսկ սուրբն Ներսէս աս
ցթագաւորն, թէ խոստովանի
զՈրդի՝ Աստուած յԱստուծոյ ծն
նեալ և ոչ արարեալ, և յառա
քան զյաւիտեանս ընդ Հօր,

յետ ժամանակի ծնեալ 'ի Մարիամայ կուսէ , և միշտ սուրբ և աստուածածին զկոյսն , և զՀոգին սուրբ կատարեալ անձն , և միաւորեալ Երրորդութիւն , և Աստուած փառաւորեալ ընդ Հօր և ընդ Որդւոյ . և Թողցես զչար հերձուածդ . այնուհետև առողջասցի որդին քո . և եթէ 'ի նոյն յամառեալ կաս , ես ինքն աղաչեցից զՏէր . զի յառաջ քան զկարգեալ սահմանն ժամանակին իւրոյ՝ բարձցի 'ի կենաց : Իսկ Թագաւորն Վաղէս պնդեալ կայր 'ի նոյն հերձուած , և ասէ . Կացից մնացից 'ի նոյն հաւատս . բայց դու որ իշխանութիւն ունիս մահուան որդւոյն իմոյ , իշխանութիւն ունիս և կենաց , կեցո զորդին իմ զի մի մեռցի : Եւ նա ասէ ցնա . Տաց նմա ողորմութիւն աւուրս հնգետասանս , զի դու ապաշխարեալ դարձցիս 'ի չար ամպարշտութեան հերձուածոյդ և յաղանդոյդ , և ապրեսցի որդին քո : Իսկ Թագաւորն ոչ զղջացեալ եղև 'ի չարէն : Եւ յետ աւուրց հնգետա-

անից վախճանեցաւ մանուկն . և սգացին զնա սուգ մեծ : Ապա ա-ծեալ թագաւորն առէ ցուցք քահանայապետն . Յարմ 'ի մեռե-լոց զմանուկն իմ . ապա թէ ոչ է դու ընդ նմին մեռցիս : Առէ ցնա սուրբ հայրապետն . Իմ բանքս այ-են ընդ քեզ . զի 'ի բաց կացցես 'ի հերձուածոց քոց , և ես յայսմ ա-ւուր կենդանի կացուցեալ տեսից զորդին քո առաջի քո :

Եւ նա ոչ լուաւ նմա . այլ հրա-մայեաց կապել զսուրբն Ներսէս երկաթի կապանօք և արկանել 'ի բանդ , և 'ի տեղւոջն սպանանել զնա չարչարանօք : Ապա ժողո-վեալ առ թագաւորն մեծամեծք քաղաքին՝ ասեն . Լուեալ է մեր յեկեղեցւոյն ընդ առնն ընդ այնորիկ եթէ ազգական և հարազատ է թա-գաւորին խորեանց այրս այս . և աշ-խարհն խորեանց սիրեն զնա առա-ւել քան զթագաւորն . և թագա-ւորն յաղագս սիրոյ և խաղաղու-թեան է առաքեալ առ քեզ . և դու սպանանե՞ս զնա . և ապա պատե-

բազում մեծ յարկեալ ընդ մեզ ՚ի Թագաւորէն Հայոց ։ Այսէ Թագաւորն ցեռոտ ․ Դա ինքնին և առ իւրեանց Թագաւորն հպատակար է և մահապարտ ․ և առաքեաց առ իւ Թագաւորն իւրեանց՝ զի մեռցի ՚ի ձեռաց իմոց ․ և ինքնին կամօք իւրովք Թշնամանեաց զիս, և ապան զօրքին իմ ։

Իսկ սուրբն Ներսէս կայեալ առաջի Թագաւորին ասէ ․ Ես մեռանիմ վասն անուան տեառն իմոյ ՚ի ձեռաց քոց ․ բայց ՚ի նմին ամի և դու կորիցես աներեւոյթ սրով ․ և առցի Թագաւորութիւնդ քո առ նմա՝ որ արասցէ զկամս Աստուծոյ իմոյ ։ Իսկ Թագաւորն լի ցասմամբ հրամայեաց աքսորել զսուրբն Ներսէս ՚ի կղզի մի յանապատ և հեռաւոր հանդերձ եօթանասուն և երկու արամբք եկեղեցականօք, զի անդէն մեռցի ։ Եւ յայն կղզւոջն ոչ կայր ճանապարհ նաւի, և ոչ արմատ ինչ գալարուոյ և ոչ ջուր ․ բայց միայն աւազ ։ Եւ կացին անդ իբրեւ ամսօրեայ աւուրս ․ ապա սկսան

նքողէլ 'ի սովոյ և 'ի ծարաւոյ . ան-
կանէին առաջի առնն Աստուծոյ
սրբոյն Ներսիսի , զի հնար լիցի նո-
րա զերծանել յայնմ տառապա-
նաց ։ Իսկ սրբոյն Ներսէսի կացեալ
յաղօթս նոքօք . և իբրեւ կատա-
րեաց զաղօթսն , յարուցեալ հողմ
'ի ծովուն և սկսաւ ընկենուլ
ձուկն սաստիկ 'ի կղզին՝ իբրեւ ըզ-
շեղջս , ընդ նմին փայտ և աղ . և
փայտն ինքնին լուցանէր առանց
հրոյ ։ Ապա յաղօթս եկաց սուր-
բըն Ներսէս ամենեքումբք և փո-
րեաց ինքնին զաւազն , և ելանէր
ջուր բարեհամ, որ կայ մինչեւ
ցայսօր ։ Եւ այնու կերակրեալ լի-
նէին օրըստօրէ ընդ երեկս ։ Իսկ
սուրբն Ներսէս ճաշակէր յաւուրս
հնգետասան ։ Եւ կային 'ի կղզւոջն
ամիս ինն ։

Իսկ Թագաւորն Վաղէս զիշխան-
սն որ էին ընդ մեծին Ներսիսի մեծ
անուամբ , գանձիւք և ականմբք
պատուականօք և անչափ մեծու-
թեամբ՝ արձակէ առ Թագաւորն
Հայոց մեծաց Արշակ ։ Իսկ իշխա-

նայն մտեալ առ Թագաւորն Վաղէս ասէն, թէ Անպարտք եմք մեք յաղագս քահանայապետին մերոյ զոր կորուսեր, եթէ պատերազմ յարիցէ ընդ մեզ և ընդ ձեզ: Եւ գրեաց Թագաւորն Վաղէս առ Արշակ, թէ Զորդին իմ զաթոռակիցն իմոյ թագաւորութեանս սպան Ներսէս. և զիս յանդիման մեծամեծաց իմոց անարգեաց իբրև զստրուկ մի. յաղագս այսպիսի պատճառանաց եղեւ կորուստ նորա. զի մահապարտ էր նա: Արդ մի լիցի մեղադրանք եղբայրութեանդ քո վասն նորա. զի թէ ընդ քեզ էր արարեալ զգործն զոր արար ընդ իս, դու էիր քոյին ձեռօքդ վրէժխնդիր լեալ սմա: Եւ կուտէր զամենայն վնաս 'ի վերայ սրբոյն Ներսիսի. և այնու կամէր զմիտս հաճել զԹագաւորին Արշակայ:

Եւ առեալ իշխանացն որ էին ընդ մեծին Ներսիսի դեսպանութեամբ՝ զթուղթն Վաղեսի և անչափ գանձս, հասանէին յաշխարհն Հայոց առ Արշակ: Իբրեւ լուաւ

զկորուստ մեծին Ներսիսի՝ բարկութեամբ լի եղեւ. եւ առեալ ըզգանձն՝ ցիր եւ ցան ընկենոյր ՚ի խորանին: Նա հրաման տայր Վասակայ զօրավարին Հայոց առեալ Մամիկոնէից՝ գունդս պատրաստել, զօրս կազմել, խաղալ գնալ ՚ի վերայ աշխարհին Յունաց: Նա Վասակ Մամիկոնեան գնացեալ յաշխարհն Հոռոմոց՝ զբաղում ամրոցս անմատոյցս հիմն ՚ի վեր տապալէր. եւ առեալ զառ եւ զապուռ, եւ երթեալ իջանէր յեզր ծովուն՝ ՚ի տեղւոջ մի որ կոչի Խռուպօլիս 125. եւ ՚ի նեղութիւն ածեալ զքաղաքն՝ ոչ տայր ելեւմուտ առնել: Նա Հռոմայեցիքն ոչ ելանէին ՚ի պատերազմ ընդ Հայոց վասն դաշանցն Կոստանդիանոսի եւ մեծին Տրդատայ: Իսկ այլ զօրքն Յունաց՝ որ առ Վաղեսի էին, ամենեւին ոչ իշխէին ելանել՝ վասն կորովութեանն Վասակայ: Իսկ կայսրն Վաղէս նեղեալ ՚ի քաղաքացւոցն՝ խոյս ետ եւ գնաց յԱդրիանուպօլիս: Նա Նեքտառիոս պատրիարքն այլ եւս մեծամեծօքն ել առ

Վասակ և առ զօրն Հայոց. և ե-
գեալ ուխտ ընդ նոսա հաւանու-
թեան, զի մի այլ ապերասցեն զեր-
կիրն, այլ դարձցին սիրով յաշ-
խարհն իւրեանց: Եւ յետ ութ ամ-
սոյ դարձաւ զօրավարն Վասակ
զօրքն Հայոց և բազում աւարաւ
առ Արշակ:

Յետ այսորիկ տեսանէր Վաղէս
յանուրջսն զսուրբն Ներսէս, զի
սրով փողոտէր զնա և ասէր.
Բռնանամ զքեզ 'ի կենաց, զի բա-
զում լուսաւորս խաւարեցուցեր
յերկրի. և պատմեաց Թագաւորին
զտեսիլն, և նորա ցնորք համարէին:
Իսկ 'ի նմին աւուր հրկէզ եղեալ
ամպարիշտն Վաղէս՝ սատակեցաւ
իբրեւ զշուն. և ոմանք ասեն՝ ե-
թէ աներեւոյթ սրով: Յետ այսորիկ
նստուցանեն յաթոռ Թագաւորու-
թեանն զԹէոդոս, որ էր ուղղա-
փառ հաւատով: Եւ տեսեալ նա-
ւավարացն զլոյս կրակին 'ի կղզւո-
ջին՝ յորում էր սուրբն Ներսէս,
և գնացեալ Թէոդոս Թէ կենդանի
է մեծ քահանայապետն Ներսէս.

և վարդապետի անեալ առ ինքն և եդ զաթոռ մեծին Ներսեսի 'ի վերան զամենայն եպիսկոպոսացն որ ժողովեալ էին և զպատրիարգին եւս, որ վասն Հոգեմարտին Մակեդոնի էին գումարեալ: Նա մեծ փառօք և շքով և մեծարանօք և պատուով յղարկէր Թագաւորն Թէոդոս զսուրբն Ներսէս յաշխարհն Հայոց մեծաց:

Թ. Իսկ և լուաւ Թագաւորն Արշակ' կարծեցեալ զնա 'ի մեռելոց յարուցեալ, ընդ առաջ ելանէր նմա զօրօքն. և մեծ ուրախութիւն լինէր գալ նորա աշխարհին Հայոց. և նորոգէր աթոռ սրբոյ առաքելոյն Թադէոսի և վիճակ Լուսաւորչին Գրիգորի: Նա լինէր ամենայն Հայք յաւուրս մեծին Ներսէսի' իբրև զմի այր կատարեալ առաքինութեամբ. և մուրող ոչ ոք ունանէր յաւուրս նորա. զի 'ի հիւանդանոցն կարգէր զպէտս աղքատաց:

Նա իբրև հեռացեալ էր սուրբն Ներսէս 'ի Յոյնս, արար չարիս մեծամեծս Արշակ. առեալ հանին

մի վայելուչ՝ եւ հրաման շինել զնա քաղաք . եւ անուանեաց զնա Արշակաւան . եւ ետ պատուէր ընդ աշխարհն եւ ասէ . Թէ որ ուրուք պարտիցի ինչ , կամ զուրուք կին յափշտակիցէ , կամ ծառայս կամ գանձս կամ զձի կամ զջորիս , կամ զկարասիս , կամ զինչ հաճոյ թուեսցի մարդոյ 'ի վերայ երկրի , եւ առեալ անկանիցի անդ , գտանել իրաւունս յարքունուստ մի լիցի : Եւ տայր յանպատշաճ տեղւոյ կամուրջ արկանել եւ նոյնպէս առնել : Եւ շատացաւ քաղաքն ամառին յոյժ , եւ լցաւ անիրաւութեամբ . զի անդ ժողովեցան աւազակք եւ սպանողք եւ գերողք եւ գերեզմանակրկիտք , եւ ըն էին չարեաց , եւ այլին չահա քաղաքն Արշակայ :

Իբրեւ լուաւ զայրին տուրքն 'Նեւեւս , որ անցին ընդ Հայք , մե տրամութեամբ մաանէր առ Թագաւորն , եւ յանդիմանէր զնա վասն Արշակաւանին եւ ասէր , Թէ Վայ որ շինէ զաւան իւր եւ ոչ իրաւամբք . զի Թէպէտ եւ ապարանք մեծամեծք

իցեն և գեղեցիկք, սակայն յաւէր դարձցին։ Եւ արդ տուր հրաման քակել զնա, և թող ցրուեսցին յիւրաքանչիւր տեղիս. և ես շինեցից իմով ձեռամբ քեզ այլ քաղաք, որ տացէ շահս եւթնպատիկ յարքունի։ Իսկ թագաւորն ծիծաղեալ զխրատով նորա՝ ոչ լուաւ նմա։ Իսկ սուրբն Ներսէս ասէ ցթագաւորն. Փոխանակ զի ոչ լուար ինձ, մի լուիցէ քեզ Աստուած յաւուր նեղութեան քո. և որպէս ոչ ողորմեցար տառապեալ և անապաստանորդ աշխարհիս Հայոց՝ 'ի հեռանալն իմում 'ի Յոյնս, մի ողորմեսցի քեզ տէր յաւուր անձկութեան քո. և որպէս բարձեր զիրաւունս 'ի չարչարեալ յաշխարհէս Հայոց. բարձցի թագաւորութիւնդ յազգէդ Արշակունեաց. և լինիցիք ապուշք նախարարաց Հայոց. և զրկեալն 'ի ձեռն զրկեսցէ զձեզ. և դարձուսցէ տարիչն զերեսս իւր յազգէդ յայդմանէ, մինչեւ 'ի մերձենալ պղծոյն անապատի։ Եւ զվայելուչ աշխարհդ

ձեր առաջի ձեր օտարք կերիցեն ։ Եւ դու Արշակ յաւուր երկեր լիցես զահին անձին քո ըստ օրինակի Սաւուղայ և Հերովդի · զի ատէր եցոյց ինձ ։ Եւ փոխանակ զի գործեցեր նոր չարիս , նոր ինձ ցաւս առաքեսցէ Աստուած յանիրաւ քաղաքն քո · և ոչ մնասցէ 'ի նա քար 'ի քարի վերայ՝ որ ոչ քակտեսցի ։

Եւ այլ բազում բանիւք յանդիմանէր զթագաւորն սուրբն Ներսէս · և ել լի ցասմամբ յերեսաց նորա ։ Եւ եղանէր մեծն Ներսէս 'ի տեղի մի յանապատ , և կացեալ անդ յաղօթս , մատնեաց Աստուած զանիրաւ քաղաքն 'ի հարուածս · զի եղանէր կեղ ժանտագոյն 'ի մարդ և յանասուն , և առժամայն սատակէին · և անուանեցին զցաւն զայն ժանտ՝ մինչեւ ցայսօր · և ութեւտասն հազար երդս անմարդ լինէր · և յանկարծակի լինէր շարժ մեծ , և զամենեսեան առ հասարակ սատակէր · և ոչ եւս երեւէր ուրեք նըշմարանք , ոչ քարի և ոչ փայտի , որ եթէ լեալ իցէ չէն 'ի տեղւոջն ։

Յետ այսորիկ հեռանայր սուրբն Ներսէս յաշխարհէս Հայոց, և հասանէր 'ի քաղաքն Ուրհայ: Իբրև լուաւ արքայ Արշակ զհեռանալ սրբոյն, եգիտ զմին 'ի դրան քահանայից իւրոց, որում անուն էր Չունակ. և կոչեաց զեպիսկոպոսունս աշխարհին՝ զի ձեռնադրեսցեն զնա եպիսկոպոսապետ Հայոց. և ոչ հաւանեցան նմա եպիսկոպոսունքն. բայց միայն եպիսկոպոսն Գառնոյ Գէորգ, և եպիսկոպոսն Աղձնեաց Տաճատ, և եպիսկոպոսն Անձևացեաց՝ Սիմէօն. և ձեռնադրեցին զՉունակ յաթոռն Ներսիսի կաթողիկոս Հայոց: Եւ նա ոչ իշխէր յանդիմանել զթագաւորն, այլ հաւանեալ կամաց նորա 'ի հարկէ:

Ժ. Յետ այսորիկ ապստամբեցին յԱրշակայ նախարարքն Հայոց և կուսակալք և սեպուհք և տանուտեարքն, և այլ խառնաղանջքն: Իսկ թագաւորն Արշակ գնաց ակամայ առ Շապուհ արքայն Պարսից, ընդ նմին և Վասակ Մամիկոնեան

երեք որդւովք, որոց անուն էր ա-
ռաջնոյն՝ Մանուէլ, և երկրորդին
Կոն. և անդրանիկն գնաց փախըս-
տական յՈւրհայ առ Ներսէս, և
անուն նորա Մուշեղ քաջ։ Իսկ
զարքայն Արշակ մեծարեաց զառա-
ջինն Շապուհ արքայն Պարսից.
ընդ նմին և զՎասակ Մամիկոնեան։
Եւ 'ի միում աւուր շրջէր Արշակ 'ի
վայրս, տեսանել զերիւարս Թա-
գաւորին Շապհոյ. և ամիրայ մի
ախոռապետ Շապհոյ՝ ասէր ծիծա-
ղելով. Նիստ արքայ Հայոց 'ի վե-
րայ խրձան խոտոյ։ Եւ Վասակ
Մամիկոնեան հանեալ զսուսերն
պողովատիկ՝ ասէ. Ա՞յդպէս խօսիս
ընդ արքայի. և զարկեալ յուս նո-
րա՝ զկէս նորին յերկիր ընկենոյր։
Իբրև ետես Շապուհ՝ զարմացաւ,
և գովեաց զՎասակ վասն տիրասի-
րութեան նորա։ Յետ այսորիկ
հարկեալ և հաւանեալ գիւթոց և
նենգաւոր մարդկան Շապուհ՝ եա
կապել զԱրշակ և տանել 'ի Խու-
ժաստան՝ յԱնուշն կոչեցեալ բերդ.
և անդ Արշակ սպան զինքն սրով

խրով, ըստ նմանութեան Սաւուղայ և Հերովդի. և կատարեցաւ բան առն Աստուծոյ Ներսիսի ՚ի վերայ նորա։ Իսկ զՎասակ հրամայեաց սպանանել ՚ի բանդին. իսկ զորդիսն զՄանուէլն և զԿոնն և զՀամազասպ, ետ կարգել ՚ի գուռն հրամանատար արքունի։

ԺԱ. Իբրեւ լուաւ մեծն Ներսէս զմահն Արշակայ, գնաց առ Թէոդոս թագաւորն Հոռոմոց, և թագաւորեցոյց զՊապ ՚ի տեղի հօր իւրոյ Արշակայ. և զՄուշեղ քաջ ՚ի տեղի հօր իւրոյ Վասակայ։ Եւ առեալ զօրս ՚ի Թէոդոսէ թագաւորէ՝ դարձին ՚ի Հայս։ Եւ գայր կուտէր 126 ամենայն ցրուեալքն Հայոց առ եպիսկոպոսապետն Ներսէս և առ թագաւորն և առ զօրավարն. և լինէր ուրախութիւն յաւուրսն 126 մեծ յոյժ։ Իսկ Շապուհ արքայն Պարսից գայր հասանէր յաշխարհն Հայոց կնաւ և ամենայն ուժով իւրով. և տարուշանս չինէր յեկեղեցիսն Հայոց և Վրաց։

Եւ Մուշեղ որդի Վասակայ զօրավարին Հայոց՝ հանդէս առնէր զօրաց իւրոց. և լինէր քառասուն հազար. և զգէնն իւր բերէր առ Ներսէս և օրհնէր 'ի նմանէ. և պատրաստէր ընդ առաջ Շապհոյ։ Եւ ոչ մնաց 'ի զօրացն Հռոմէից օգնական Հայոց։ Եւ Մուշեղ սպարապետն Հայոց անկանէր 'ի վերայ զօրացն Պարսից, և գործ 'ի ձեռն առեալ դիաթաւալ կացուցանէր զնոսա։ Եւ Շապուհ այլափոխեալ զինքն միով երիվարաւ փախստական լինէր։ Եւ Մուշեղ Մամիկոնեան առեալ զաւագ թագուհին զՍիթիլհոռակ զկին Շապհոյ արքային և զայլ կանայս նորա, և առեալ հարիւր աղաւս մորթէր և լնոյր խոտով. և տայր բերել առ Պապ։ Իսկ զկանայս թագաւորին Շապհոյ՝ պահէր և ոչ տայր մերձենալ առ նոսա անկողնոք. և տայր տանել առ Շապուհ։ Եւ ինքն շիջէր աւերէր զկրակատունսն որ 'ի Հայք։ Իսկ Շապուհ իբրեւ ետես զկանայսն՝ զարմացաւ, և մեծ շնոր-

հակառ լինէր Մուշեղայ. և էր ձին Մուշեղայ սպիտակ. և Շապուհ ետ նկարել զՄուշեղ ՚ի սպիտակին. և յօրուցեալ ՚ի ժամ ճաշոյն ընդդէմ նորա բաժակէր զգինին և ասէր, փառաց ձերմակ ձիոյն ։ Եւ զայս առնէր Շապուհ՝ զի զկանայս նորա արձակեաց առ նա անխառնակ և անգլին ։

Իբրև լուաւ Պապ թէ զկանայս Թագաւորին Պարսից՝ Մուշեղ արձակեաց առ նա և ոչ էած առ ինքն, խորհեցաւ սպանանել զնա. բայց ոչ համարձակէր վասն սրբոյն ՚Ներսիսի ։ Յետ այսորիկ ՚ի Թիկունս կոչէր Թագաւորն Պարսից Շապուհ զԹագաւորն Հոնաց զՈւռնայր, և բանայր զդուռն Ալանաց. և ժողվեցան առ նա զօրքն Հոնաց և Մազքթաց և Աղուգաց. և Լփնաց, Թաւմանակաց 127 և Գուրուբէից, Ճմահաց, Գուգարաց, Ոսզաց, Ճուճաց. Շղբաց, Մաղաղճաց, Գերաց, Կուանաց, և այլ խառնաղանջ զօրացն Պարսկաց անթիւ յոյժ, և այլ անքնակ զօրաց լեռ-

նականաց Քուրդէից։ Եւ եկեալ միաբան լցին զդաշտս Աշտպատականին, և տարածեցան ընդ աշխարհն Հայոց։ Եւ ասէր Թագաւորն Հոնաց ցԹագաւորն Պարսից. Ընդ Մուշեղայ ես ելից ախոյեան իմոյ գնդաւս. և դու Արեաց գնդաւդ ճակատեա ընդդէմ Հոռոմոց գնդին։ Իբրեւ լուաւ Մանուէլ Մամիկոն եղբայր Մուշեղայ քաջի, ասէ ցնա. Գիրկս արկեր զբազում փշով, թէ ժողովեա՝ մանուկ ես։ Եւ ինքն յղէր առ Մուշեղ եղբայր իւր զխորհուրդս Թագաւորացն։ Ասէ Մուշեղ. Վստահ եմ յաղօթս սրբոյն Ներսիսի, զի նկուն լիցի փքուլ գոյս։ Եւ պատուէր տուեալ զօրացն Պարսկաց և Հոնաց, զի զզօրն Հոռոմոց ձերբակալ արասցեն և տարցեն յաշխարհն իւրեանց 'ի գործս ապարանաց և բերդից. իսկ զզօրն Հայոց յանխնայ կոտորեսցեն. զի մի ոք մնասցէ 'ի Հայոց և աշխատ արասցէ զմեզ պատերազմաւ։

Եւ ժողովեցան զօրքն Հայոց և

Հռովմոց 'ի դաշան 'նպաստակ առ Պապ Թագաւորն Հայոց. ընդ նոսին ածու և սուրբ եպիսկոպոսապետն 'Ներսէս: Իսկ Պապ չայր մատնել 'ի պատերազմ Մուշեղայ Մամիկոնենւոյ, ասելով, թէ Վան առուրս այսորիկ եթող Մուշեղ զկանայսն Շապհոյ, զի ապաստարեալ 'ի մէնջ առաւել կորուսա գործիցէ զօրաց մերոց քան զթըշնամիս մեր: Իսկ Մուշեղ անկանէր յոտս որոյն 'Ներսիսի և բարեխօս առնէր և միջնորդ. և բուռն հարկանէր զաջոյ նորա և սաստիկ երդնոյր և ասէր, եթէ Ոչ անկեալ խորհուրդ այդ 'ի միտս իմ զոր կարծէքդ: Եւ ասէ սուրբն 'Ներսէս ցՊապ. Ես եմ տէր վստաւ դորա յայսմ առուր: Եւ ապա լուեալ Թագաւորն հրամայեաց նմա վառել 'ի պատերազմ: Իսկ սուրբն 'Ներսէս հսկէր զգիշերն նոքօք հանդերձ. և մատուցանէր պատարագ և հաղորդեցուցանէր զարժանացեալսն մարմնոյ և արեան տեառն: Եւ քաջն Մուշեղ բերեալ զզօր-

ծխան պատերազմի՝ զզէնսն՝ տասուրբն Ներսէս, զի նա զգեցուցէ զնա: Եւ բերէին ամենայն զօրավարքն Հայոց և Հոռոմոց տասուրբն Ներսէս՝ զի տեառնագրեսցէ զզէնսն. և նորա տեառնագրեալ զզէնս նոցա և օրհնէր զնոսա: Իսկ Մուշեղ առնոյր զգաստառակ սըրբոյն Ներսիսի և 'ի գեղարդն իւր կապէր, և յառաջ խաղայր 'ի գործ պատերազմին: Եւ սուրբն Ներսէս ելանէր 'ի գլուխ լերինն Նպատայ, և համբարձեալ զուրբ ձեռս իւր յերկինս անխոնարհելի յաղօթս կայր առ Աստուած:

Իսկ Մուշեղ զօրավարն վառէր զգունդն Հայոց ընդդէմ գնդին Հոռոմոց, և յառաջէր քան զնոսա 'ի զօրս թշնամեացն. և որպէս զհուր փոթորկեալ յեղէգն՝ ձեղքէր զզօրսն Պարսից և զՀոնաց: Իսկ իբրև ետես Պապ՝ եթէ ծածկեցաւ նշանն Մուշեղայ՝ ասէ ցսուրբն Ներսէս. Վա՜յ, դու ետուր կոտորել զզօրսն Հայոց՝ գազանին Մուշեղայ: Ասէ սուրբն Ներսէս

ցթագաւորին. Մի կարծեր, ով թա-
գաւոր, այդպիսի վասն տիրանէր
ազգին Մամիկոնէից և անձնենք. այլ
տեսցես յայսմ աւուր զքաջութիւն
նորա։ Նա ասէ Պապ ցսուրբն Ներ-
սէս. Աղէպ աղօթեա առ Աս-
տուած. ՚ի ձայն մաղթեա ով սուրբ
քահանայապետ։ Եւ նորա համ-
բարձեալ զձեռսն ուժգին հառաչ-
մամբ և ասէր.

Տէր Աստուած զօրութեանց,
նայեաց յաղօթս իմ վասն փառա-
ւորեալ անուանդ քո. զի թէպէտ
և իցէ անօրէնութիւն յաշխարհիս
Հայոց, դու կարող ես խրատել
յիւրաքանչիւր մեղիս. բայց յա-
ւուրս յայսմիկ մի դարձուցաներ
զերեսս քո ՚ի մէնջ, այլ խնայեա ՚ի
ժողովուրդս քո՝ զոր գնեցեր ա-
րեամբդ քո սրբով։ Դարձիր ՚ի բար-
կութենէ և փրկեա զմեզ յարժա-
նահաս նեղչաց մերոց, բարեխօսու-
թեամբ Թադէոսի առաքելոյն վի-
ճակողի սորա, և խնդրուածովք
նախնոյն մերոյ Լուսաւորչին գնո-
սա. և մի կար ՚ի հեռաստանէ և

անտես առնէր զմեզ ։ Զի թէպէտ և բազում անգամ մեղանչեմք , դու ես տէր Աստուած մեր . զայլ ոք ոչ գիտեմք բայց 'ի քէն սուրբ Երրորդութիւն . ողորմութեամբդ քով խրատեա զմեզ , և անօրինաց մի մատներ ։ Զօրութիւնս քո կործանեցին , և չհաւատացեալս 'ի քեզ անարգեցին . ահա մեծարանեալք հեթանոսք , որ է Աստուած նոցա . ամենակարող և նախանձոտ տէր , լուր և ողորմեա մեզ 128 ։ Տէր 'ի քաղաք քո գթասցես վասն մեծի ողորմութեանդ , և զաշխարհս քո մի անտես առներ քո գթութեամբդ . մարդասէր , կեցո զժողովուրդս քո որ արդարակէս խրատես , աղաչեմք սուրբ Աստուածածնիւդ , միայն կարող Փրկիչ ողորմեա ։ Եւ դարձո զսուր նոցա յինքեանս և զաղեղունս նոցա յետս . ընկեա զնոսա գէշս , զի յագեսցին գազանք անապատի և թռչունք օդապատառք ։ Դարձո զզինութիւն 'ի սոյն նոցա , և նկուն արա զնոսա և ամաչեցեալ . արդ

նոցա յայսմ աւուր զբաժակ կո-
րստեան և տուր ըմպել նոցա ըզ-
ղջմտութիւն քո: Լէր բազուկ և
կարողութիւն ընտրեալ ազգի քո
քրիստոնէից՝ զոր յանուն քո ա-
նուանեցեր. երեւեցո զզօրութիւն
քո յայսմ աւուր որպէս զօրավա-
րին Յեսուայ. և վանեա զթշնամիս
մեր, և զամրութն զինուց նոցա ըստ
կործանմանն Երեքովի. ըստ գա-
րուցն եւթներորդի հանգստեան շա-
բաթուցն. և մանրեա զնոսա որպէս
բազմութն մարախոյ 'ի գուբս Ջուրց.
և անցո զմարդիկ 'ի վերայ գլխոց
նոցա: Հան զսուր աներեւոյթ 'ի
պատենից քոց և սատակեա զնոսա.
և զանքուն ակն քո՝ անողորմ դարձո
'ի նոցանէ: Յայսմ աւուր առաքեա
զհրեշտակ քո որպէս յաւուրսն
Եզեկիայ և ջնջեա զնոսա. զի դարձ-
ցին անօթովք մնացեալքն որպէս
Սենեքերիմայն 'ի հնումն. և արա
զօրս զայս նշան յաղթականն. զի
ծանիցեն յարուցեալքս 'ի վերայ
մեր, թէ դու Աստուած քրիստո-
նէից. և արա շինութիւն աշխար-

հիս Հայոց կործանմանք Թշնա-
մեաց ։ Յայտնեա զանուն քո անօ-
րինաց, որ խրոխտալով գան 'ի վե-
րայ մեր. և արա զնոսա հալածական
'ի մէնջ. և հաստատեա զխոստում-
բառ առաջին գրեցելումն, թէ Մինն
զհազարսն հալածեսցէ, և երկուքն
զբեւրսն շարժեսցեն. որ պահեսցեն
զպատուիրանս քո. այլ դրոշ-
մեալ եմք աստուածային կնքով քո՝
զոր աւազանաւն դրոշմեցաք. ընդ-
գանձս հոգեւորաշահ փարթամու-
թեանն յորդեգրութիւն ժառան-
գութեան Հօրդ երկնաւորի ։

Արդ մի որոշեր զմեզ 'ի հայրե-
նական խնամոց քոց, և մի բեկցի
դրօշմ հոգեւոր գանձի ծածկելոյ
յանձինս մեր. զի յոյս ակնկալու-
թեան մերոյ չէք՝ բայց 'ի քէն տէր
Աստուած մեր ։ Գթա տէր յայսմ
աւուր փրկեալ զժողովուրդս քո.
մի մեզ, այլ անուան քում տուր
զփառս ։ Մի ասասցեն անօրէնք
թէ ո՞ւր է Աստուած նոցա ։ Արի
տէր օգնեա մեզ և փրկեա զմեզ
վասն անուանդ քո. զի վասն քո

մաւանդ զորհանապազ ։ Հաւատացաք որպէս զոչխար ՚ի սպանումն ։ Զարթիր , ընդէր ննջես Տէր , արի և մի մերժեր զմեզ իսպառ ։ զմի՞ դարձուցանես զերեսս քո ՚ի մէնջ , մոռանաս զաղքատութիւն և զնեղութիւնս մեր ։ Խոնարհեցաւ մինչև ՚ի հող անձինք մեր և յերկիր մածեան մէջք մեր ։ Աստուած , յանուան քում կեցո զմեզ , և ՚ի զօրութեան քում իրաւ արա ինձ ։ Աստուած լուր աղօթից իմոց , ունկն դիր բանից բերանոյ իմոյ ։ Օտարք յարեան ՚ի վերայ իմ՝ և հզօրք խնդրեցին զանձն իմ՝ և ոչ համարեցան զքեզ Աստուած առաջի իւրեանց ։ Ահա Աստուած օգնական իմ՝ և տէր ընդունող հոգւոյ իմոյ ։ Նա արհնեա անձն իմ՝ զտէր , մինչև թագաւորեսցէ տէր յաւիտեան ։

Արդ զայս և որ սոյին նման է՝ ՚ի ձայնս արկեալ զանազան եղանակօք և հառաչմամբ ՚ի գութ ածէր զբարեգութն Աստուած ։ Իսկ զորոյ յիշեալս խառնեալ՝ քաջս ընդ

քաջս երամելին ։ և իբրև զձայն ուռանց գարընոց և զհայթիւն մայրևորաց՝ լսել լինելին ։ և 'ի սաստկանալ մեծի պատերազմին՝ 'ի փախուստ դարձուցանելին զզօրսն Ալանաց և Պարսկաց և Ուզաց և Մազքթաց՝ գունդն Հայոց ։ Եւ իբրև խոնարհեր ձեռք սորայն Ներսեսի, զի տեղի առնուին փախստականքն և ընդդիմանայքն զօրացն Հայոց ։ և իբրև համբառնայր սուրբն Ներսէս զձեռսն , ցիրուցան լինելին զօրքն անօրինաց առաջի զօրացն Հայոց ։ Եւ անդ փոխարկեալ զօրքն Հայոց զկնի փախստէիցն , սուր 'ի վերայ եդեալ առ հասարակ սատակէին զամենեսեան ։

Եւ Շապուհ արքայն Պարսից իջեալ յերիւարէն և այլափոխեալ զգեստն և 'ի գարափոր մի մտեալ՝ ապրէր ։ Իսկ Մուշեղ զօրավարն Հայոց ակրն Մամիկոնեից հասեալ Ուռնայրի Հոնաց թագաւորին , և ընդ նիզակին ծեծէր զգլուխն նորա թուլացայն , և ասէր ։ Ահա

ախոյեանս քո զոր յուզէիր . բայց դու գնա շնորհակալ լեր այդմ՝ փ-այր Թագաւոր ես , և ես ոչ սպա-նից զԹագաւոր զդք : Ես եմ Մու-շեղ Մամիկոնեան զոր դուն ցան-կայիր մենամարտիկ լինել : Զայս ա-սացեալ եԹող զնա և ոչ էած առ Պապ , զի մի սպանցէ զնա : Եւ յետ յաղԹուԹեանն և անհնարին և մեծ պատերազմին՝ դառնային զօրքն Հայոց և Հոռոմոց առ Պապ Թա-գաւորն և առ եպիսկոպոսապետն Ներսէս , բազում աւարաւ և խըն-դուԹեամբ :

Բայց յայնմ մեծի պատերազմին ոչ ոք անկանէր 'ի զօրացն Հայոց: Իսկ Մուշեղ Մամիկոնեան գործ մի զարմանալի պատմէր , Թէ իբրեւ սաստկացաւ մարտն 'ի մէջ երկո-ցունց՝ ընդ մեզ և ընդ Թշնամիս մեր, եղեալ փոշին և շուք նետիցն յօդս 'ի վերայ մեր , և 'ի ձայնից փղացն և 'ի նիզակացն և 'ի խաւարէն ոչ ոք ճանաչէր զիւր կողմն կամ զԹշնա-մեացն . ապա երԹայր սուրբ քա-հանայապետն առաջի մեր , և ձե-

ամբ խռով ցուցանէր զթշնամիս մեր . զոր ելանէաք ընդդէմ նոցա և յերկիր ընկենուաք . զնոյն տեսիլ և ամենայն զօրքն պատմէին . և անկանէին յոտս որբոյն Ներսիսի և ասէին թէ Քո էր յաղթութիւնն : Եւ իջեալ 'ի լեռնէն տօն մեծ կատարէին զօրն զայն :

Իսկ 'ի նմին ժամու մատուցեալ քսուք մարդիկ՝ ասեն ցթագաւորն Պապ , եթէ Մուշեղ զօրավարն զբռամբ էած զթագաւորն Ալանաց զՈւռնայր , և ձերբակալ արար և ոչ էած առ քեզ . և ոչ ինքն սպան . այլ եթող կենդանւոյն որպէս զկանայսն Շապհոյ արքայի : Իբրեւ լուաւ թագաւորն Պապ՝ դարձոյց զերեսս իւր 'ի Մուշեղայ , և ընդ ակամբ հայելով զմահ խորհէր նմա : Ապա մնեալ Մուշեղ առաջի թագաւորին Պապայ ասէր ցնա . Ընդէր դարձուցեր զերեսս քո յինէն . միթէ վատութիւն ինչ արարի . ես զնմանիսն իմ սպանի՝ զորոց ոչ գիտեմ զթիւսն . իսկ նա թագաւոր էր թէպէտ և անօրէն

էր , զնա գեղ էր քեզ տեսանել, զի քո էր պատուականից . եւ ոչ միա-ցից զձեռն իմ 'ի նա , եւ մի այլ մէջ միել զձեռն իմ յօծեալ՝ որչափ եւ իցեմ կենդանի ։ Այլ առաջի քո կամ եւ այսօր . եթէ հաճոյ թուի քեզ՝ տուր զիս , պատրաստ եմ 'ի մահ 'ի ձեռաց քոց ։ Իսկ Պապ թա-գաւոր գիրկս արկանէր Մուշեղայ եւ համբուրէր զնա , եւ ասէր . Մահա-պարտք են այքն որ խօսին զՄուշե-ղայ չարութիւն ։ Իսկ պարգեւս բա-զումս շնորհէր նմա ։ Իսկ ասէր Մու-շեղ ցթագաւորն . Ես եղից զորին իմ յայսմ հետէ 'ի վերայ Հայոց . բայց դու ով թագաւոր աչք քո տես եւ ականջք քո լուր եւ մի յայ-լոց . եւ ընտրեա զլաւն 'ի վատթարէն, եւ զվստահութիւն 'ի վատ արանցն . եւ մնասցէ յուղղութիւն երկիր Հայոց ։ Իսկ լուաւ զայս թագաւորն եւ հաճոյ թուեցաւ նմա բանքն ։

Իսկ զկնացեալ անտի Մուշեղ զօ-րավարն Հայոց , եւ կայր ընդդէմ ամենայն պատերազմացն զօրքն Հայոց ։ Իսկ մեծն Ներսէս շքեղ

ընդ ամենայն երկիրն Հայոց, և հաւաքէր զնիւթ վարդապետութեան իւրոյ։ Ընդ նմա և աշակերտն իւր Մեսրովբ 129, որ անուանեցաւն Մաշդոց. ամենայն կրթութեամբ հոգեւոր իրաց զանձն տուեալ. բազում և անհեշտական իրաց և անհանդիստ գիշերային, չհարկ քնոյ յանձնուր ազնութեամբ 'ի թօթափել ական վճարէր, ոչ տակաւ ժամանակս այլ յոլովս։

ճ.Բ. Բայց Թագաւորն Պապ զաղբագործէր, և յանդիմանէր զնա սուրբն Ներսէս, և նա ոչ լսէր նմա. և սուրբն Ներսէս դարձուցանէր զերեսս իւր 'ի նմանէ, և անիծանէր զնա որպէս զհայր նորա զԱրշակ։ Եւ անդէն նեղէին զնա դեւքն. և երեւէին նմա իբրեւ զօձս մարմնաւոր տեսլեամբ։ Եւ եկեալ առ Ներսէս անկանէր առաջի նորա, և հայցէր թողութիւն՝ զի մաղթէ առ նա։ Եւ իբրեւ մտանէր մեծն Ներսէս առ նա, դիւրանայր նմա, և հանդչէր, և ոչ երեւէին նմա դեւքն. և հալածական լինէին 'ի

նմանէ ։ Եւ իբրեւ ելանէր ՚Ներսէս, ապա նեղէր Թագաւորն Պապ ՚ի տռփոյ ցանկութեանն . իսկ սուրբն ՚Ներսէս յաղօթս կայր, և հալածէին ՚ի նմանէ դեւքն . իսկ յետ մեկնելոյ սորայն, Թագաւորն ՚ի նոյն չարիս անկանէր ։ Եւ ապա սուրբն ՚Ներսէս արգելոյր զնա և ոչ տայր նմա յեկեղեցին մտանել ։ Եւ Թագաւորն խորհէր ՚ի դիպող աւուր սպանանել զՆերսէս, բայց ոչ կարէր վասն երկեւղի նախարարացն և ժողովրդեանն՝ որ գային առ ՚Ներսէս, և բժշկէին ախտաժետք և աշակերտէին նմա, և ոչ մեկնէին ՚ի նմանէ բազում ժողովուրդք ։ Եւ զնոր ցաւքն զոր առաքեաց Աստուած յանխրատ քաղաքն Արշակաւան, զայն որ ժանդ անուանեն մինչեւ ցայսօր, զոր բժշկէր սուրբն ՚Ներսէս ձեռօքն տեառնագրելով ։

Յետ այսորիկ կոչէր Թագաւորն Պապ զմեծն ՚Ներսէս ՚ի Խաչ կեղծաւորութեամբ, զի դեղօք սպանցէ զնա, ՚ի գաւառն Եկեղեաց, ՚ի գեւղն որ կոչի Խախ . և տայր

զնա նենգաւ, թէ կերիցես զճաշ ընդ իս, յորժս յայսմանէ գնասցիս ըստ կամաց քոց մինչեւ ցվախճան. և զինչ և հրամայեսցես ինձ՝ տալ խարեցից 'ի քուրձ և 'ի մոխիր ըստ կամաց քոց։ Իսկ սուրբն Ներսէս ոչ յիշելով զանձին խւրոյ վնաս, երթայր ընդ նմա 'ի ճաշ. և իբրեւ մտանէր 'ի խորանն, բանադատէր զնա թագաւորն բազմել 'ի թագաւորական գահոյսն. իսկ նա ոչ առնոյր յանձն. և բազում աղաչանօք բազմեալ 'ի թագաւորական գահոյսն. և թագաւորն Պապ յարուցեալ հոլանէր զինքն, և իջանէր 'ի գետինն, և մատուցանէր նմա. և 'ի բաժակն խառնէր չար դեղ, և մատուցանէր սրբոյն։ Իբրեւ արբ զբաժակն, գոհացաւ և ասէ. Օրհնեալ է Աստուած, որ արժանի արար զիս ըմպել զբաժակ մարտիրոսական և հասանել մահուանաւն, որում ցանկայի 'ի մանկութենէ իմիք. բայց զի ոչ ընթացայ կամաւ, զի առանց ըմբռնելոյ կամաւ անկանելն անձնահաճու-

թիւն է. և ոչ հաճի պատկագին
ընդ անձնահաճն, զի երբեւ զՊետ-
րոսն գրգռեսցի : Բայց դու ով
Թագաւոր անխրատ, գեղովք և նէն-
գութեամբ անհաստանելոյն է հնար.
իսկ ես հանապազ ընդ քեզ էի.
յայտնապէս սպանանել զիս՝ ով
էր որ արգելոյր զձեռն քո յինէն.
Եւ արդ աւեր թող սոցա զինչ գոր-
ծեցին ընդ իս 'ի տարապարտուց.
և ընկալ զհոգի ծառայիս քո որ
հանգուցանես զամենայն աշխա-
տեալս. և յարուցեալ գնաց 'ի
վանս իւր :

Եւ զհետ գնացին նմա ամենայն
իշխանքն, և զօրավարն Հայոց Մու-
շեղ. և Մարգպետն՝ որ Թագաւո-
րահայրն կոչիւր. և սեպուհք և
կուսակալք և ռամիկք զկնի նորա
գնացին ողբով և արտասուութեամբ:
Եւ երբեւ եմուտ սուրբն 'ի վանս
իւր. և մերացուցեալ զպարեգօտն
յանձնէ իւրմէ, կայր կառուցեալ
'ի վերայ սրտին կապուտակ բոլոր
երբեւ զնկանակ մի. և Նախարարքն
մատուցանէին նմա Թիւրակէս և

անդէղայս , զի Թափեսցեն զդեղն և ապրեսցի ։ Իսկ Նա ոչ առնոյր յանձն . զի մի մերժեսցի 'ի տէրունական խորհրդոյն և 'ի փրկական մարմնոյն տեառն . և ասէ , Թոյլ տուք ինձ զի վաղ հրաժարեցայց յանիրաւ աշխարհէս և յապերախտ մարդկանէ 130 ։ Զի ահագին է անջատումն հոգւոյ 'ի մարմնոյ . և առաւելն յետ յարութեանն ըմբռնումն 'ի տանջանս . քանզի մին զմիաւորեալսն յօդս քակէ . իսկ միւսն՝ զյանցումն հրապարակէ յայտնապէս . քանզի ոչ է Թաքչել որ զանիրաւսն գործեաց , 'ի յանժուժկալ 'ի դատաստանին կշտամբեալ զմեղսն ։ Այլ որ Ճշմարիտդ ես՝ զվշտակցութիւն քո ցոյց ինձ Աստուած և ողորմեա ։

Յորժամ 131 հնչումն լինի փողոյն և բարբառք՝ երկնաւոր զօրացն լսին ձայնք , յայնժամ եղկելիքն տագնապաւ կորնչին և պահանջին 'ի գեհենն . և դասք արդարոցն միաւորեալ երգեն ընդ սերովբէսն , վասն որոյ քեզ գոչեմ խնայեա յիս տէր և ողորմեա ։

Յորժամ խմանամ զաչաւոր բարբառ փողոյն 'ի յաւուրն յետնումն, և յառնելն նառելով քեզ տէր, 'ի ժողովել զբոլորեսն 'ի յանողորմ դատաստանն առաջի քո տէր, յայնժամ քակսին ոսկերք իմ, խափանեալ միտք 'ի խորհրդոց, ինձէն զիս դատապարտեմ 'ի գաղտնեաց իմոց, թէ բնաւ փրկեցայց, այլ 'ի զղջումն և յապաշխարութիւն փոխարկեալ գթա Աստուած և ողորմեա :

Իբրև լուէին զայս ամենայն ժողովուրդն՝ յարտասուս եղեալ լային դառնապէս : Եւ Մուշեղ Մամիկոնեան և Հայր մարդպետն, և Բակուր Վրաց իշխանն, և Բագրատ Բագրատունեաց իշխանն, և Հայկըն 132 Հայկազնի և Մեհրուժան Արծրունեաց իշխանն, և Համամ Մելետնեւոյ իշխանն, և այլ մեծամեծ իշխանք և նախարարք և տանուտեարք և գաւառապետք Հայոց աշխարհին, և եպիսկոպոսք բանադատէին զնա զի տացէ զգեղաթափն : Իսկ սուրբ քահանայա-

պետն 'ի բաց մղեր ասելով. Թէ Ես ես օգնականութեամբ Աստուծոյ իմոյ կարող եմ հալածել զդա 'ի մարմնոյ իմոյ. բայց թողից զի մի խափանումն լիցի յառաջարկութեան ճանապարհի իմոյ. զի կոչէ զիս նահատակագիրն զի առից զվարձս վաստակոց իմոց: Բայց զի ազգդ Արշակունեաց բազում լուսաւորս պակասեցուցեալ յաշխարհիդ Հայոց յազգէ իմմէ, շիջուցին զլոյսն յինքեանց, զի եղծանելով աէր կամի եղծանել զնոսա որպէս զխարայէլ: Արդ զոր ընդ իս գործեցին՝ թողեալ լիցի նոցա. զի ցանկութիւն իմ լցեալ եղեւ: Բայց յետ ննջոյ յիւրուն ամաց՝ բարձցի քահանայութիւն 133 յազգէս մերմէ՝ որ է սրբոյ նախնւոյն իմոյ Գրիգորի, ընդ նմին և թագաւորութիւնդ յազգէդ Արշակունեաց, մինչեւ 'ի մերձենալ պղծոյն անապատի: Յետ այնորիկ 'ի ննջել ամաց հարիւր և յիսնից 134 առցեն զսուրբ քաղաքն Երուսաղէմ Պարսիկք, և նոյն ինքն զխաչն, և վարեսցեն 'ի գերութիւն. և իր-

բեւ դարձցի 'ի Պարսկաց՝ այլ ոչ եւս դարձցի յԵրուսաղէմ. և Երուսաղէմ ոչ եւս կացցէ յիշխանութեան Յունաց. և խմբեցալք տիրեսցեն նմա, և արկցեն ընդ հարկիւ զՅոյնսն մինչեւ 'ի ժամանակս մերձենալոյ արիական ազգին. և ապա առցեն զԵրուսաղէմ ազգն Հռովմայեցւոց՝ որ անուանին փռանգք, և բարձցեն ըզհարկատրութիւն Յունաց:

ԺԳ. Արդ սկիզբն աշխարհաց աւերածոյն Հայոց 'ի նենգութենէ եղիցի և յանհնազանդութենէ միմեանց. զի ոչ հնազանդին իշխանքն, այլ բաժանին յիւրաքանչիւր գաւառս, և ոչ հասցեն միմեանց 'ի թիկունս, այլ 'ի թշնամեացն կողմն եղիցին: Յետ այնորիկ ելցեն յիւրաքանչիւր հայրենեաց և անկցին զիշխանութեամբն Յունաց 'ի ստրկութիւն և 'ի ծառայութեան. և թուլասցին 'ի հաւատոց. և այնպէս պակասեսցի իշխանութիւն նոցա: Եւ թագաւորքն Յունաց սակաւակեացք եղիցին և զպատերազմաց ոչ

հողացեն, այլ զհարկաց միայն. և զփոխելոյ կարգաց և զքննութեան հաւատոց, զոր հիմնեցուցին տաւ-քելաջան ժողովքն երեք. և քակտեսցեն զբազումս 'ի հաւատոց քրիստոնէից. և այն լիցի ջան նոցա և վաստակ ։ Բարձցի զօրութիւն Յունաց արանց պատերազմողաց. զզուեսցի աշխարհ նոցա յազգէ աղեղնաւորաց և անկցին զհարկիւ նոցա. խոպանասցին գաւառք բազումք. տարակուսելով տարակուսեսցի երկիր. և եղիցին հրաձգութիւնք և ջրհեղեղք և շարժմունք. կործանեսցի տեղիս տեղիս. լինիցին նշանք և սքանչելիք յերկինս ։

Լռեսցի և քահանայութիւնս Հայոց զամս բազումս. տապալեսցի 'ի հիմանէ Հայք. առցին և պարիսպք անմատոյցք 'ի նեղոտաց ազգաց. և կերիցեն ազգն այն զմարմինս բազկաց իւրեանց, այսինքն զազգայինս իւրեանց, ըստ կանխասացութեան Եսայեայ ։ Եւ այս բան 135 Յովհաննու, որ ասէ թէ նեռինք բազումք եկեալ են յաշ-

խարհս. և այն ամենայն օժիղքն է երկանց: Եւ սուրբ տեղիք աթոռոյ հայրապետութեանն Հայոց՝ եղեցին բնակութիւն և օթեվան ազգացն հեթանոսաց. և գատարկացին ճանապարհք բազմագնացք ա'ի չգոյէ մարդկան. և օգնութիւն և ոչ ուստեք: Յայնմ ժամանակի ասասցեն լերանց թէ անկերուք 'ի վերայ մեր, և բլրոց՝ թէ ծածկեցէք զմեզ, ըստ գուշակմանն Երեմիայի: Ցամաքեսցի սէր բազմաց. արմատասցի անգթութիւն, և մարդիկ անժուժք եղիցին և ամենայն աշխարհ անհանգիստ տագնապեսցի. և իմաստունք յարեւելս փախիցեն:

Եւ յետ այսորիկ փրկութիւն ամենայն աշխարհաց քրիստոնէից յարիական զօրացն եղիցի 'ի Հռովմայեցւոց. և ապա խաղաղեսցի երկիր 'ի բարի գնացս ժամանակս բազումս. որպէս զդրախտ ամենալից դարձցի: Եւ հերքեսցին անօրէնք, և անկցին ընդ լծով ծառայութեան Հռովմայեցւոցն. և մարդիկ աւաղեսցեն զանցեալսն և զու

հանդիպելոյն այնմ բարեաց ։ Յետ այնորիկ յայանեսցի որդին կորըստեան Նեռն ։

Արդ մինչդեռ եմ 'ի մարմնի զեկուցանեմ ձեզ․ որոյ գալուստն ազդեցութեամբ սատանայի է․ և ոչ թագաւորէ նա Տաճկաց կամ Պարսկաց կամ այլազգեաց, այլ պաշտօնէից ամենայաղթ խաչին․ զի ինքն որդին կորստեան կորնչելոց է 'ի փառաց նորա․ և լինիցի սկիզբն այն 'ի յանդիմանութիւն Հրէիցն․ զի և նոքա իսկ ակն ունին մոլորեցուցչին ։ Արդ դուք պատուէր տուք որդւոցն ձերոց, և որդիք նոցա որդւոց իւրեանց․ և գրոշմեսցեն գրով և պահեսցեն մինչեւ 'ի մերձենալ պղծոյն․ զի լինիցին որոգայթապատրաստք 136, զի մի ընկղմեսցին յորոգայթ նորա ։

Արդ ես ծնայ զձեզ լուսաւոր աւազանաւն, և մինչեւ 'ի շունչս վերջին՝ բորբոքեալ եմ 'ի գութ ձեր․ և վշտանամ թէ գուցէ արատ ինչ խառնիցի 'ի սնունդս ձեր՝ յետ ելանելոյ իմոյ յաշխարհէս ։ Զոր փո-

խանակ իմ Աստուած բանն հօր հոլովեսցէ զժողովուրդ իւր. զոր գնեաց արեամբն իւրով։ Արդ նշան յայտնելոյ Նեռինն այս է. յորժամ լցցի երկիր խռովութեամբ՝ յետ բարի ժամանակին և բարձցի իշխանութիւն Հռովմայ, որպէս ծանուցաւ Դանիէլի վասն չորս գազանացն. մատակ առեւծն՝ որ է Մարաց թագաւորութիւնն, և արջն՝ որ է Բաբելացւոցն, և ինձն՝ որ է Պարսից, և չորրորդն որ ահեղ և զարմանալի ցուցաւն, որ ուտէրն և մանրէր զերկիր, որ է Հռովմայ թագաւորութիւնն. զի որպէս 'ի գալստեանն Քրիստոսի բարձաւ իշխանութիւնն Իսրայելի, նոյնպէս և յայտնել պղծոյն՝ բարձցի իշխանութիւնն Հռովմայ։ Իսկ երեք թագաւորութիւնքն բարձան 'ի միջոյ. և չորրորդն եկաց հաստատուն, որ է Հռովմայ թագաւորութիւնն՝ որ բառնայ 'ի Նեռնէն։

Յառաջագոյն ծաղկի անգթութիւն և ցամաքի սէր, և լինի սովք և սասանութիւնք և սրածութիւնք.

մամնեսցէ եղբայր զեղբայր 'ի մահ և հայր զորդի · այս 'ի տեառնէ ասացաւ , զոր գիտէք իսկ · և հովանայ 137 երկիր ։ Զի զոր սերմանեսցեն՝ ոչ ժողովիցեն , և որ անկիցեն՝ ոչ կերիցեն , և բազում գուշակմունք եղիցին յաղագս յայտնելոյ նեռինն ։ Արդ մի կործիցէք թէ սատանայ է կամ դեւ 'ի զօրաց նորա · ոչ , այլ մարդ ապականեալ մօրք 'ի տոհմէն Դանայ , և ծնանի 'ի Քորազին գեղջէ 138 յազգէ իսրայէլի · և անուն հօր նորա Հռովմելայ , և մօրն նորա Ներդինենէ 139 · և անուն նորա Հռասիմ · և ծնանի 'ի կուսանաց · և գայ 'ի Բիւզանդիոն · և մեծանայ անուամբ բստ մեծութեանն Յունաց ։ Այս բաժանի Թագաւորութիւնն Յունաց ընդ սասն գաւառն · և մինն ինքն իցէ 'ի Թագաւորացն և զերիս Թագաւորսն սպանանիցէ , և զայլսն զձեռամբ ածիցէ , և ինքն տիրեսցէ ամենեցուն · Թագաւորեսցէ ժամանակս երեք և կէս ժամանակաց · և բարկութեամբ ապականէ զերկիր · և զամենայն ար-

բանեկութիւն սատանայի յինքն կրէ, որոյ գալուստն իսկ ազդեցութեամբ սատանայի է. և արասցէ նշանս և արուեստս աւուրս 140 հազար և երկերիւր և վաթսուն: Բայց երանի որ համբերիցէ և հասանիցէ յաւուրսն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և փրկցի: Յայնժամ եթէ աղացեն երկուս 'ի մի երկանն, մին առնուցու և միւսն թողուցու. և ցցուեսցի տէրև թզենւոյն՝ որ է նեռն. ցցուել տատոյ՝ պաշտօնեայք նորա. երկանն՝ կենցաղս է. և առնուլն ընտրութիւն բարւոյն 'ի չարէն:

Արդ նայի որդին կորստեան յեկեղեցւոյն Աստուծոյ և սկսանիցի հայհոյել զԱստուած. և իւր պահանջէ զերկրպագութիւնն մատուցանել իբրև Աստուծոյ. և ցուցանէ զանձն իւր Աստուած, և հպարտանայ 'ի վերայ ամենայն անուանեալ աստուծոյ. և միայն զինքն տացէ պաշտել փոխանակ Աստուծոյ. և ընու չարեօք և պղծութեամբ զերկիր: Յայնժամ առաքէ Ա-

տուած զերկուս մարգարէսն զԵնովք և զԵղիաս 'ի փրկութիւն մարդկան, որ զգուշացուցանեն զհաւատացեալս, և դարձուցանեն զսիրտ հարց առ որդիս իւրեանց. որպէս և տէրն իսկ պատմեաց՝ թէ Եղիա գայ և յարդարեսցէ զճանապարհս իմ: Արդ որպէս յառաջին գալըստեանն Յովհաննէս եղեւ կարապետ Քրիստոսի, նոյնպէս և յերկրորդ գալստեանն Եղիա պահի կարապետ Ենովքիւ հանդերձ: Արդ նոքա երկոքեանն գայցեն և տասցեն. Մի հաւատայք այծոյն որ կայ 'ի սուրբ տեղւոջն. զի նա է վիշապն մեծ և օձն կամակոր. պատրանօք խաբէ զձեզ և արուեստիւք ստօք. մի մերձենայք 'ի նա, այլ փախերուք 'ի լերինս. և համբերեցէք սակաւ մի ժամանակս. սուտ Քրիստոս է դա, և մարգարէիւք ստօք խորամանկել կամի զպաշտօնեայս խաչին. ազդեցութիւն է դա բազում մոլորութեանց. այլ աղօթեցէք զտիւ և զգիշեր. զի սակաւ է նեղութիւնք և անպատու բարկին:

Իսկ Քրիստոս ոչ գայ յերկրէ, այլ յերկնից անճառ փառօք. և մատնէ զնա 'ի խաւարն արտաքին և յանողորմ տանջանսն. և ոչ կայ Քրիստոս առաջի Պիղատոսի 'ի դատաստան, այլ ինքն դատի զերկիր. զայս և որ ասցին նման քարոզին մարգկան Ենովք և Եղիա: Յայնժամ նեխի և գարշի երկիր 'ի հոտոյ մեռելոցն, և ապականի յամենայն կողմանց, զազրանայ ամենայն դէմք մարդկան 'ի նեղութենէ սովոյն և 'ի ծարաւոյ ջրոյն. անկեալ դնի ոսկի և ականք պատուականք և գունակ գունակ պատմուճանք, և ոչ ոք ցանկայ 'ի վաճառգին որ լինելոցն է 'ի չարութեան ժամանակին: Յայնժամ յիշեն մարդիկ զգործս իւրեանց աղտեղիս, որք առին 'ի ճակատ զմոլորութե նշանն պիղծ ժողովուրդն, և ասեն ցնեռնն. Տուր մեզ օգնութիւն 'ի նեղութեանս, զի ապաւինք առ հասարակ: Եւ նա ոչ օգնեսցէ նոցա, այլ մնոտի յուսով խաբէ զնոսա: Յայնժամ ըմբռնին 'ի ձեռն նորա Ենովք և Եղիա, և

պիղծն այն չարչարէ զնոսա անհնա-
րին հարուածովք և հայհոյէ զԱս-
տուած բանիւք բազմօք։ Իսկ յոր-
ժամ ոչ հնազանդին սուրբ մար-
գարէքն պատրանաց նորա և սուտ
նշանացն, սպանցէ զԵնովք և զԵղ-
իա առաջի բազմաց. և խնդութիւն
լինի սուտ մարգարէիցն 'ի տեսանել
զմահ Ճշմարիտ մարգարէիցն։

Յայնժամ և ինքն մեծ վիշապն
որդին կորստեան գոչմամբ մեծաւ
հնչէ 'ի լսելիս ամենեցուն և ասէ.
Տեսէք զզօրութիւն իմ մեծ. զի 'ի
բազում ամաց անմահ լեալ էին
դքա, և այլ ոչ կարացին ապրել 'ի
ձեռաց իմոց. և ոչ ոք կարաց յաղ-
թել զօրութեանս իմոյ։ Եւ առա-
ւել բորբոքէ չարութիւն ընդ աշ-
խարհս. որ տէր Յիսուս սատակես-
ցէ զնա հոգւով բերանոյ իւրոյ։ Եւ
յորդորէ զհայհոյութիւն առ բար-
ձրեալն 'ի լսելիս բազմաց։ Եւ մինչ-
դեռ զայն յաւելուցու խօսել, յան-
կարծակի յական թօթափել լինի
շարժումն ահեղ որոտման. և 'ի նմին
ժամու հալեալ մաշին պաշտօնեայք

ադծոյ նեափին ։ Յայնժամ լուսա-
փայլ երեւի նշանն արքունական 'ի
զօրացուցանել զապաւինելոյն 'ի
նա 'ի պարծանս արդարոյ․ զի կա-
ռեցին զանձինս իւրեանց 'ի ներ նո-
րա ։ Յուսանան մնացունք ամենայաղթ
նշանին և զօրութիւնք սորայ եկե-
ղեցւոյ , և ամենուն հաստատ ընդ
արքունական խաչին․ և լուսաւորք
նուագին 'ի լուսոյ նորին ։ Կածե-
ցին ազգք․ զի գայ 'ի գտանել զշ-
գրոշմայն նովաւ , որ ոչ ծանեան
զնա արքունեան նշան ։

Յայնժամ գայ յերկնից անձա-
փաւոր թագաւորին փառաց․ զաւա-
ռին երկինք և հալին իբրեւ զմոմ
առաջի հրոյ․ գետք հրեղէն և մթա-
գոյն հոսին վերուստ 'ի վայր' մաք-
րելով զերկիր յանօրէնութեանց և
'ի պիղծ գործոց ։ Լսին ձայնք լուսե-
ղէն զօրացն․ շարժին զօրութիւնք
երկնից․ և փող սաստիկ հնչէ 'ի գե-
րեզմանս , Արիք մեռեալք ընդ ա-
ռաջ փեսային․ քանզի եկն եհաս
հայրենի փառօք․ արիք արդարք և
մեղաւորք ընկալարուք զհատու-

ցումն ։ Յայնժամ կոծեսցին ան-
մխիթար ազով արարածք անպատ-
րաստք ․ և զգենուն փութապէս
զանանցական մարմինս ․ այլ մեղա-
ւորքն երեւին ստուերագոյն մար-
մնով , քանզի ներկեալք լինին գոր-
ծովք չարեաց իւրեանց ․ յառաջա-
գոյն եւս գան անձամբ ընտրեալքն
պայծառանան մարմնով ․ բարձրա-
նան յերկրէ լուսեղէն ամպովք ՚ի
հանդիպումն Քրիստոսի ․ և հիանան
վերինքն ընդ նոսա և ասեն ․ Զինչ
է գործեալ սոցա յերկրի , զի երա-
մայքն գան առ տէր զուարթա-
ցեալք ։ Պատասխանի տայէ նոցա
տէր թէ սոքա են բարեկիր զինուորք
իմ , որ ուրացան զանձինս իւրեանց ․
և մեկնեցան յերկրէ , և ՚ի խաչ հա-
նին զանձինս իւրեանց կարեօք և
ցանկութեամբք հանդերձ վասն սի-
րոյ իմոյ ․ և արդ ես տամ սոցա
զուրախութիւն իմ զանսպառ ։ Եւ
մինչ լսիցեն զայս հրեշտակք աս-
ցեն ․ Դուք էք օրհնեալք ՚ի տեա-
նէ , արդ ուրախ լերուք յուրախու-
թեան ձերում ։

Յայնժամ նոցա թագաւորն փա-
ռաց յաթոռ իւր. և հրեշտակք
ահիւ սպասաւորեն նմա. և յառա-
ջագոյն կայր սատանայ առանց
հարցափորձելոյ, և առաքի 'ի միջն
տարտարոսի. և չարալլուկ կայրն
դէմ նորա ձախակողմանն, որ ա-
ռուցին մարդկան գործս չարս. ոչ-
էն նորա արժանի 'ի դատաստան
մտանել, զի չէր պատասխանի առա-
ջի բեմի նորա։ Եւ անդէն մեկնին
յերեսաց նորա, և կացցեն յաջմէ
նորա բարեացն յուսով արդարքն.
կան և մեղաւորքն ամօթով մեծա-
'ի պահանջումն խարազանացն գոր-
ծոց. տեսանեն զնի և զայլութինչ
բանին, խրձունք կայրն որպէս ու-
րանն և ձգին 'ի հուրն անշէջ։ Իսկ
ամենայն և գրունքն փակին ուրախ-
լից հարսանեացն. զի մի հնար լիցի
զփեսայն երկնաւոր հայել տեսա-
նել. զի ոչ վառեցին զարդարութե
զլապտերս, առեալ ընդ նոսա. Ոչ
գիտեմ զձեզ, 'ի բաց կացէք յերե-
սաց իմոց։ Եւ յառաջ քան զայս
մին ընծայէ թագաւորն զերկնային

պսակն արժանաւորացն, առնլով զնոսա. Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալ ձեզ զարքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի:

Նորանան երկինք, նորոգի երկիր կանաչացեալ ազարթանօք վայելչութեամբ, և լինի արքայութիւնն երեւանաւոր, որպէս և դրախտն վաթանաւոր, և երկինք հաւրեւրաւոր. և ոչ լինիցի յերկրի աշխատութիւնք և քրտունք. ոչ ևս խարող և ոչ կին պատրող. այլ լինիցին ծառք անթառամելիք պտղովք. և մեկնեալ ցաւք և տրտմութիւնք. այլ լինի միայն ուրախութիւն և փափկութիւն: Եւ ամենայն յերկրի տայէ զարքայութէ: Իսկ մարտիրոսացն կարմիրագոյն փայլեն պսակքն. և պատմուճանք և փառքն. ընդ նոսին և կուսանացն՝ որք ոչ շաղախեցին զանձինս իւրեանց ընդ աշխարհիս այսորիկ. ընդ կուսին Մարիամու ընդունելոց են զպայծառութիւն փառաց պսակին, այլակերպեալ որպէս զարեգակն 'ի մէջ աստեղաց.

նոյնպէս տառապելոցս փառք կա_
տանայն 'ի մէջ ամուսնացելոցն ։

Եւ դուք որդեակք իմ զայս ա_
մենայն 'ի միտ առէք, զի ապրես_
ջիք յորոգայթից որսողին, և զերծ_
ջիք որպէս զայծեամն 'ի գործեաց, և պարծանք իմ լինիջիք յաւուրն
Քրիստոսի ընդ աջմէ նորին. որպէս
եցոյց ինձ տէր ։

ԺԳ. Զայս ամենայն տեսեալ
որդոյն Ներսիսի մարգարէական ա_
կամբ. և ունէին զնէին նմա ամենայն
ժողովուրդն և մեծամեծ նախա_
րարքն Հայոց. և յաւէտ առաւել նե_
ղէր զնա ։ Եւ Մուշեղ Մամիկո_
նեան և այլ իշխանքն անկանէին
առաջի ոտից որդոյն, և հայցէին 'ի
նմանէ թողութիւն և օրհնութիւն ։
Եւ նա թողութիւն շնորհէր նոցա.
և յանձն արարեալ զնոսա Աստու_
ծոյ և բանի շնորհաց նորա ։ Եւ
զՄուշեղ սպարապետ և զայլ իշ_
խանսն՝ որ անդ հանդիպեցան յայ_
նժամ աւուր 'ի տոհմէն Մամիկո_
նեան, կոչեցեալ առ ինքն՝ եդ ըն_
ձեռն իւր 'ի վերայ, օրհնեաց զնո_

տա և տաէ. Տէր Աստուած ինքնին եղիցի առաջնորդ Մամիկոնէից. որպէս Թագաւորին Դաւթայ և զօրավարին Յեսուայ. և հաստատես֊ ցէ զոտս ձեր անսասանելի, և զձեռս ձեր զօրացուսցէ 'ի վերայ թշնա֊ մեաց ձերոց. և հաստատեսցի օրհ֊ նութիւնն առաջինք յազգ Մամի֊ կոնէից, թէ Մինն զհազարս հա֊ լածեսցէ և երկուքն զբեւրսն շար֊ ժեսցեն. և օրհնեալ լիջիք յամենայն ազգս որ 'ի վերայ երկրի. և գտա֊ ջիք անուանիք և պնդակազմ 'ի հաւատս ուղղափառս, և նախան֊ ձախնդիր հաւատոց քրիստոնէու֊ թեան. մի մաշիք ընդ լծով ծա֊ ռայութեան այլազգեաց. և ձեզ եղիցի փրկութիւն ազգաց. և ըն֊ կեսցին մարգարէք պատուականք յազգին Մամիկոնէից, որ կարգես֊ ցին մարտիրոսութեամբ 'ի Թագ֊ աւորին Քրիստոսի: Եւ այլ ես բազում բանիւք օրհնեաց զնոսա:

Եւ յետ այսորիկ համբարձեալ զհանապազատարած զձեռս իւր հարուստ ժամ մի վասն Հայոց աշ֊

խարհիս, հայցեր և առեր. Տէր Աստուած բազմագութ և ողորմած, պահեա անարատ զհաւատս Հայոց աշխարհիս, բարեխօսութեամբ սուրբ առաքելոյն Թադէոսի վկայելոյ սորա, և Նախնոյն Իմոյ Գրիգորի հեռաւորի Նորա. զի թէպէտ և լինի անօրէնութիւն յազգս Հայոց ըստ օրինակի Նախնեաց սոցա, սակայն դու ողորմութեամբ քո խրատեա զսոսա. և հեղձուածող ապականիչ սուրբ հաւատոյ մի մացէ յաշխարհս Հայոց, մի գաղձն վնասակար զզուեցէ զանապական բաժակ սեղանոյ քո, և զսուրբ հաց փրկութեան խորհրդոյ քո: Աղաչեմ զքեզ տէր, պահեա զսոսա ամբիծս ՚ի հաւատս ուղիղս, և մի կոխեսցեն գայլք վնասակարք զգաւիթ սուրբ հօտի քո: Ի հաւատս առաքելական պահեսցես զիշխանս մեր. զի աշակերտք մոլորութեանցն պալք հերձուածողացն՝ չօջեսցին ընդ լեռնացեալ միտս աշակերտելոց իւրեանց, որ ոչ դաշտացեալ լուսաւորութիւն

ուխտարանին քո զբարձրացեալ միաւ՛նոցս ։ Այլ Թէպէտ և յաղգ-մանէ չարին մանանիցէ 'ի վիճակս յայս հերձուածող, դու տէր աղա-չեմ զքեզ՝ արմատաքի խլեա զնոսա յաշխարհէս յայսմանէ . և մի՛ աղ-արտեսցէ պղտորումն զմնացական աղբեւր ջրոյ բղխեալ յաստուա-ծութեան համանցգ աշխարհիս Հայոց . և զվիճակս զայս պահեա անարատ մինչև 'ի միւսանգամ գալուստ քո ։

Եւ զայս աղօթս արարեալ և յետ այսորիկ մանէր սուրբ քահա-նայապետն յեկեղեցին և ողջոյն տուեալ սեղանոյն սրբութեան , և այլ ևս եղբարցն 142 ամենեցուն , որոց անդն էին . և ասէ . Ողջոյն քեզ սուրբ եկեղեցի . ողջոյն քեզ սեղան սրբութեան , ողջոյն ձեզ դասք քահանայութեան . ողջոյն ձեզ հաւատացեալ եղբարք իմ 'ի տէր . ողջոյն ձեզ դուռնք զինուո-րութեանց . ողջոյն ձեզ պաշտօ-նեայք և գաւիթք սուրբ եկեղեցւոյ . ողջոյն ձեզ համօրէն ազինք ։ Եւ

Ճանապարհորդեցի առ արարիչն իմ. Թողի զամենայն զկեանս իմ, Թողի զժառանգութիւն իմ, և ըստ հրամանի քում մերձեցայ 'ի հող յորմէ ստեղծայ: Ահա հրաժարիմ 'ի քէն սուրբ եկեղեցի. ահա հրաժարիմ 'ի ձէնջ սիրելի եղբարք 'ի կոչումն վերանորոգողին Քրիստոսի Աստուծոյ իմոյ: Աղօթս արարէք վասն իմ հարք իմ եղբարք և որդիք, և օրհնեսցէ զձեզ Քրիստոս փրկիչն մեր. պահեսցէ հաստատուն 'ի հաւատս իւր, մինչև 'ի սահմանեալ կէտ կոչմանս այսորիկ. և խաղաղութիւն տեառն եղիցի ընդ ձեզ յաւիտենից յաւիտեանս. ամէն:

Յետ այսորիկ բազմէր 'ի քահանայապետական աթոռ իւր. և սկսաւ ասել. Օծեր իւղով զգլուխ իմ. բաժակ քո որպէս զանապակ արբեցոյց զիս:

Հրաժարելով 143 յաշխարհէս մարմնով, յետ մահու խափանին ամենայն խորհուրդք և առժամայն լուծանի ամենայն մարմնական պա-

տերազմ՛, 'ի հանդէս այնուհետեւ հանդերձելոցն ժամանեալ: Յայնժամ զարհուրեալ դողան առաջի բեմին, զխաղագործսն հրապարակին. քանզի ամենեքեան ըստ իւրաքանչիւրոցն արժանաւորին հատուցման մեր: Որ հանապազ հզօրդ ես և յետ մահու ունիս իշխանութիւն, մարդասիրեա յիս յահագին դատաստանին և ողորմեա: Յորժամ հանդիպումն լինի ազգի մարդկան առաջի քո բեմիդ, սարսափեն ոսկերք իմ դողալով և զարհուրիմ 'ի ատենալեաց քոյ թագաւոր երկնաւոր, քանզի բազում ունիմ զանօրէնութիւն և զմեղս անձին իմոյ. այլ զքեզ կոչեմ յօգնականութիւն, որ կարող ես յամենայնի և բժիշկ հոգւոց, տէր ողորմեա:

Եւ վիրան ոռոգանէր զանձամբն, և ցաւն սաստկէր զնա ուժգին. և նա ձեպէր 'ի հանգիստն: Եւ յարուցեալ յաթոռոյն ել 'ի գաւիթս եկեղեցւոյն, և տարածեալ զձեռս իւր, հայեցաւ յերկինս զուարթ սրտիւ. և յիշէր յաղօթս

իւր զամենայն աշխարհ զհեռաւորս և զմերձաւորս ։ Եւ ունէին զնէրնմա Մեսրովբ աշակերտն իւր, որ անուանեցաւ Մաշդոց. և կացեալ յաղօթս այսպէս աւելով.

Մերձեցաւ անձն իմ 'ի հող յորմէ առեղծայ. քանզի պատուիրանաւն յանցեայ, մերոյ նմա և ճաշակեցի զզաւանութիւն մահու, այլ յոյս իմ օգնեա ինձ ։ Խնդրեմք 'ի քէն Թագաւոր Թագաւորաց և այր արքայից, յորժամ գաս դու և երեւիս մեծութեամբ քո, գունդք հրեշտակաց և զօրութիւնք առաջի քո ընթանան 144 . գաս հնչմամբ մեծաւ և ձայնիւ փողոյ զարթուցանես զննջեցեալսն, բժշկես զվիրաւորեալսն . դաս բոցով և դատես անշէջ հրով, ծագես 'ի մերուստ յարեւելից կողմանէ . և սուրբ խաչն ճառագայթիւք երեւի առաջի քո . և յայտնեալ երեւիս աշխարհի, և հատուցանես իւրաքանչիւր զգործս իւր . բանին զըղրութիւնք, կարգին աթոռք, և լինի անկաշառ դատաստան . գնին

իշխոք արդարոց և մեղաւորաց · լինի ձայն մեծի փողոյ · ընթանան զօրութիւնք , սարսափեն հրեշտակք , փայլատակի հուր , խաւարի արեգակն և լուսին , Թօթափին աստեղք , խառնակին ամպք , ցամաքի ծով , հիմնան արարածք ամենայն · ուրախանան բարիքն և ողբան չարիքն , վկայքն պսակին ըստ ճգնութեանն , և դատողքն ըստ տանջանացն , պապակին ուրացողքն , դատին խաչեցողքն , բերկրին երկըրպագուքն խաչին , և հառաչեն ուրացողքն · պսակքն յայտնին և կուսանքն խնդան · առագաստն զարդարի , և իմաստուն կուսանքն պատրաստեալ մտանեն · ճրագունք վառեալք , իսկ յիմար կուսանքն դատարկացեալք , ճրագք անցեալք , գլուխ խոնարհեալք , սիրտք տըրմեալք · հալածին 'ի ձայնէ Թագաւորին որ ասէ , Ոչ գիտեմ զձեզ ։ Խնդան աջակողմանքն և լան ձախակողմանքն · խայտան օդիքն և մերժին այծիքն յերեսաց տեառն ։ Լոյսն պայծառանայ և խաւարն

նուաղի · դժոխքն աղաղակեն, և սատանայ յամօթ լինի · ցանկութիւնն անցանէ և որդն ոչ մեռանի։

Արդ յորժամ այս ամենայն կարգի 'ի քումդ մեծութենէդ և 'ի բարութենէդ, յայնժամ դատաւրես և պայծառացո զհոգի ծառայի քո 'ի խորանդ լուսոյ ընդ նահատակս քո և ընդ կամարարս, ընդ նմին և զամենայն հաւատացելոց բանին քո 'ի քեզ։ Եւ նուաստս որ կալայ զաթոռ առաքելոյն Թադէոսի և սրբոյն իմոյ 145 Գրիգորի · և զաւուրս ուրախութեանց առանց աշխատանաց որպէս դու խոկ հաճցար՝ քաղաքավարեցայ ըստ կամաց քոց · և այժմ տէր Յիսուս Քրիստոս ընկալ զոգի իմ խաղաղութեամբ 146 ։

Եւ զայս ասացեալ հրամայեաց ժողովրդեանն 'ի բաց երթալ յինքենէ։ Եւ յաղօթելն աւանդեաց զհոգին սուրբ եպիսկոպոսապետն Ներսէս, բարի խոստովանութեամբ 'ի Հայր և յՈրդի և 'ի Հոգին սուրբ, յամսեանն հրոտից, յաւուր հինգ-

չարաթու ։ Եւ ժողովրդեանն ոչ խնայեալ զվախճան առնն Աստուծոյ · զի ձեռք նորա կանգուն կային ընդ երկինս, և պարանոցն անխոնարհելի · և ժողովուրդն մերձենային 'ի նա' զի նստուցեն զնա, զի էր աշխատեալ և վաստակեալ 'ի ցաւոց գեղոյն ։ Եւ իբրեւ տեսին զնա զի վախճանեալ էր, հիացումն լինէր ժողովրդեանն, և անկեալ զպարանոցաւ նորա, կոծ մեծ առնէին · ճիչք և լալումն լինէր Հայոց աշխարհին, զի հեղաւ արիւն արդար 'ի տարապարտուց · և ողբալով մեծաւ տարեալ կողմնեցուցին 'ի քահանայապետական գահոյն · և երեւէր տեսողացն իբրեւ կենդանի ։

Իսկ երկու անապատաւորք, անուն միումն Եպիփան և միումն Շաղիտայ, որք էին բնակեալ մին յԱւեւծ լերինն և մին 'ի Նպատակ, և այլ բազումք հարք որք էին յայրսն և 'ի քարանձաւսն, իբրեւ փոխեցաւ սուրբն Ներսէս՝ տեսանէին յիւրաքանչիւր տեղւոջէ 'ի

տուընջեան ժամու զմեծն Ներսէս իբրեւ մարմնով յափշտակեալ ընդ ամպս երկնից. և զի հրեշտակք առնէին զնա 'ի վեր, և գունդք գունդք գային ընդ առաջ նորա, բերելով նմա պսակս պայծառս և բազմափայլս քան զարեգակն: Զոր տեսեալ սուրբ հայրն մեծ զարմաց-մամբ և ահիւ՝ գային 'ի գաւառն Եկեղեաց 'ի գեօղն Խախ, և տեսա-նէին զվախճան առն Աստուծոյ մեծին Ներսիսի, և յայժ ողբային զնա և ասէին. Ո՜վ լուսաւորիչ աշխարհի, որ զանձին մերս ոչ գի-տելով այլ քոյին անմեղութեամբ և ջերմեռանդն աղօթիւքդ՝ զայլ մեղապարտաց զաստուածատեաց մերս հալէիր, յիշեա զմեզ առաջի Աս-տուծոյ: Եւ պատմէին զտեսիլն ժա-ղովրդեանն սուրբ հայրն, և լինէր մեծ հիացումն:

Յետ այսորիկ կոչէին տապան Թագաւորն և այլ մեծ Նախարարքն. և եդեալ զսուրբն 'ի տապանի՝ Թա-ղեցին զնա 'ի գեօղն՝ որ անուանի Թիլն աւան: Եւ կացեալ ժամ լու-

այ 'ի վերայ գերեզմանին զաւուրս քառասուն · և բաղում բժշկութիւնք կատարէին 'ի գերեզմանէն , և մինչև ցայսօր · զի առնլով հող 'ի գերեզմանէ նորա՝ բուժէին 'ի ցաւոյն որ ժանտ անուանեն · զոր և ինքն խնդրեաց յԱստուծոյ զնոր և զանհնարին ցաւ վիրայն՝ վասն անիրաւ և չար քաղաքին Արշակաւանին :

Արդ այսպէս քաղաքավարեաց զկեանս իւր մեծն Ներսէս , և այսպէս փոխեցաւ · կացեալ 'ի հայրապետութեանն Հայոց մեծաց ուղղափառ հաւատով , ամս երեսուն և չորս [147] :

ԺԵ · Արդ յետ այսորիկ 'ի մի վայր ժողովեալ նախարարք , իշխանք և սեպուհք և ազատակք [148] Հայոց աշխարհին , մխիթարէին զմիմեանս վասն փոխման սրբոյն : Եւ կոչէին և տային զօրս 'ի ձեռս քաջին Մուշեղայ Մամիկոնենւոյ , զի ընդդէմ կացցէ պատերազմաց : Եւ ասէ Մուշեղ · Ոչ կարեմ , զի չիք մեր յաղթութիւն · զի յաղ-

Թուղթին մեր 'ի սրբոյն առաջնոց լինէր . և այսպէս երեւի խորհրդոց նորա՝ թէ թողեալ եղեւ Հայք 'ի ձեռանէ Աստուծոյ . զի բարձաւ արդարն 'ի միջոյ . և արդ վասն մեր ով որ աղօթեսցէ : Եւ արդարացուցանէին զբանսն ամենեքեան :

Եւ արդ թէպէտ և այսն Պապ զՆերսէս , այլ ոչ յագեցաւ չարեաց , այլ հրամայեաց զմանկանցն քակել և զատարանոյն , և զոր շինեալ էր երանելւոյն Ներսեսի : Երբեւ տեսին նախարարքն Հայոց՝ խորհեցան սպանանել զՊապ , և թագաւորեցուցանել զպաշտն Մուշեղ : Իսկ Մուշեղ արգելոյր զնոսա 'ի խորհրդոյն , և ասէր . Ո՞չ լուայք 'ի սրբոյն Ներսեսէ , զի պատուիրեաց մեզ և ասաց , թէ մի՛ վրէժխնդիր լինիք մահուան նորա , զի տէրն է վրէժխնդրութիւն :

Յետ այսորիկ երբեւ լուաւ Թագաւորն Թէոդոս , թէ այսն Պապ արքայն Հայոց զսուրբն Ներսէս , արձակեաց զաղանի թուղթ առ զօրավարն Հոռոմոց , որ եկեալ էին

'ի Թիկունս Հայոց . զի հնարեսցեն սպանանել զՊապ . և զօրավարին կոչեալ 'ի ճաշ զՊապ թագաւորն Հայոց , և թարուցեալ 'ի տանն լեգէոնք սուսերամերկք . խրխեւ չատայան զխնճոյն՝ սպանեցին զերականքն զՊապ , և սպանին 'ի սեղանի անդ . որ թագաւորեաց Հայոց ամաց ամս եւթն . Այս վրէժխնդրութիւն յԱստուծոյ վասն սանն Աստուծոյ մեծին 'Ներսիսի լինէր :

Ի ժամանակէն յայնմանէ յորմէ փոխեցաւ սուրբն 'Ներսէս , ոչ դադարեաց պատերազմ և խռովութիւն յաշխարհէս Հայոց . Եւ յետ մահուան թագաւորին Պապայ՝ գումարեաց սպարապետն Մուշեղ զզօրսն Հայոց , և 'ի տագնապի 'նեղէր զաշխարհն Պարսից . և զՇերտակայն մերթէր և ընդր խոտով , և տէր . Զոհ լիջիր Արշակայ և Վասակայ հօր իւրոյ . Եւ շրջէր վանգէր զատրուշանան որ յաշխարհին Հայոց , զոր գտանէր անդ և 'ի Վրաց , և 'նորոգէր զեկեղեցիս :

Յետ այսորիկ թագաւորեցոյց

մեծն Թէոդոս զՎարազդատ աշ-
խարհին Հայոց 'ի տեղի Պապայ
հօրեղբօր իւրոյ։ Եւ մատուցանեն
քսութիւն զՄուշեղայ առ Թագա-
ւորն թէ 'նա եղեւ պատճառ սպան-
մանն Պապայ։ Եւ Թագաւորն Վա-
րազդատ խորհէր սպանանել զՄու-
շեղ. և ոչ կարէր վասն կորովու-
թեան առնն և երկեւղի իշխանացն
Հայոց։ Այլ կոչէր 'ի ճաշ զՄու-
շեղ. և իբրեւ բազմեցան և յաճա-
խեցին գինւովլ, Թաքուցեալ սրս
քան, մատուցեալ յանկարծակի
կալան զերկու ձեռացն Մուշեղայ.
և Թագաւորն Վարազդատ փութա-
ցեալ հար 'նիզակաւ 'ի սիրտ 'նորա.
և ասէ Մուշեղ. Այս յո՞ր երախ-
տեաց մերոյ։ Եւ Վարազդատ ասէ.
Դ՛ուն դու հարց զՊապ, թէ զ'ն
վասն Էր ետուր 'ի ձեռս սպանո-
ղացն։ Եւ ասէ Մուշեղ. Ի մերոյ
խնոյ վաստակոցն, արեան և քրտ-
անցն, որ փոխանակ զատուտակի
ուղղոս 'նեաւ որբէի զքիրան իմ.
արդ այս եղեւ հատուցումն ինձ.
օրհնեալ է Աստուած. բայց ընդէր

ոչ գիտեցաւ մահ խոր 'ի սպառ-
բաղմի և 'ի վերայ երիւարի վասն
քրիստոնէից։ Եւ Սմբատ 149 Սահ-
առունեաց իշխանն՝ հանեալ զսու-
սերն իւր՝ անցոյց ընդ փողսն Մու-
շեղայ 150։ Զոր առեալ զմարմին
նորա տարեալ 'ի Տարօն գաւառ՝
Թաղեցին 'ի վանսն Գլակայ 151։ Եւ
Թագաւորն Վարազդատ զՍմբատ
Սահառունի զօրավար կարգէր փո-
խանակ Մուշեղայ։

Եւ 'ի տեսչութենէն Աստուծոյ
Թագաւորն Պարսից արձակէ զՄա-
նուէլ և զԿոն յաշխարհ իւրեանց
կնաւ և որդւովք, որ էին որդիք
Վասակայ Մամիկոնենից և եղ-
բարք Մուշեղայ սպարապետին
զոր սպանին. զոր տարեալ էին 'ի
գերութիւն ընդ Արշակայ և ընդ
Վասակայ Մամիկոնենից հօր իւ-
րեանց։ Եւ եկեալ Մանուէլ մեծա-
հասակ և եղբայրն իւր Կոնն որդիք
Վասակայ յաշխարհն իւրեանց Տա-
րօն, և բնակեցին անդ։ Եւ կատա-
րէր օրհնութիւն սրբոյն Ներսիսի 'ի
վերայ ազգին Մամիկոնենից։ Եւ

բանակային 'ի վերայ գաւառացն Մանասէին և կոնն. և յափշտակէր Մանասէին զզօրավարութիւնն 'ի Սմբատայ Սահառունւոյ. և եկաց 'ի տեղի եղբօր իւրոյ Մուշեղայ և հօր իւրոյ Վասակայ:

Եւ յղէր Մանուէլ պատգամս առ Վարազդատ այսպէս, թէ Ազգն իմ զարիւն իւրեանց մաշեալ են 'ի վերայ թագաւորութեանն Արշակունեաց, յաղագս որոց և եկեղեցեաց և ուղղափառ հաւատոյ. որպէս պապն իմ Վաչէ 'ի վերայ Խոսրովայ, և հայրն իմ Վասակ 'ի վերայ Արշակայ, և եղբայրն իմ Մուշեղ 'ի վերայ Պապայ: Իսկ դու փոխանակ բարի առնելոյ տիրասէր ազգին Մամիկոնենից՝ չար հատուցեր. զի զՄուշեղ զեղբայրն իմ զայր աստուածազօր և քաջ, զոր ոչ կարացին թշնամիք յաղթել նմա, կալար զնա, և իբրև ոչ ոք մի 152, նեղամահ արարեր 'ի տարապարտուց: Զայս դուք քաջ գիտէք և ստոյգ, զի ազգն Մամիկոնենից ոչ են կացեալ ծառայք ձեր,

այլ ընկերք և նախնիք մեր Թագաւորքն Ճենաց, որ են պապք մեր, այսինքն է հարք, փոխեան երկուորդիք Թագաւորին Ճենաց և եկեալ բնակեցան յաշխարհիս Հայոց, և պատուեալ եղեն 'ի Թագաւորէն որպէս զհամապատիւս իւրեանց, որոց անուանք նոցա, անդրանկանն՝ Մամ, և երկրորդին Կոն յորջորջիւր, և 'ի նոցունց անուանեցան Մամիկոնք 152։ Այլ դու Վարազդատ ոչ ես Արշակունի, զի պոռնկորդի ես. արի գնա յաշխարհէս Հայոց, զի մի մեռցիս 'ի ձեռաց իմոց փոխանակ եղբօր իմոյ Մուշեղայ։ Եւ Վարազդատ յղէր առ Մանուէլ զօրավարն Հայոց տէրն Մամիկոնէից՝ խստագոյն պատասխանի այսպէս. Զի ասացեր դու թէ Թոռն եմ ես Ճենաց, զայդ արդար ասացեր. արդ արի և երթ դու յաշխարհն քո Ճենաց. ապա թէ ոչ՝ և դու մեռցիս 'ի ձեռաց իմոց որպէս զքաջայրն զՄուշեղ զեղբայրն քո։ Իբրեւ լուաւ Մանուէլ սպարապետն Հայոց զպատգամս

թագաւորին , ժողովէր զզօրս Հայոց մեծաց ։ Իսկ Թագաւորն Վրաստան պատրաստէր զիւր զօրն , և ածէր 'ի թիկունս իւր 'ի զօրացն Յունաց ։ Եւ իբրև բարձաւ պատգամաւորն 'ի միջոյ նոցա , աս- պատակեալ երկոցունց զօրացն բա- նակէին 'ի դաշտին Կարնոյ ։ Եւ 'ի լինելն խառնման երկոցունց զօ- րացն 'ի միմեանս՝ 'ի պարտութիւն մատնեցան զօրք Թագաւորին և Յունաց ։ Եւ հասեալ զօրավարն Հայոց Մանուէլ որդւովն իւրով Հմայեկիւ՝ Թագաւորին Վրաս- տանայ՝ և ընկեցեալ 'ի ձիոյն , և կա- մէր սպանանել զնա 153 Հմայեակ որդին Մանուէլի Մամիկոնենւոյ ։ Եւ ոչ ետ նմա թոյլ Մանուէլ սպա- նանել զԹագաւորն . այլ կալա- հարեալ զգլուխ նորա՝ դառնայր 'ի բանակն իւրեանց մեծաւ ուրա- խութեամբ 154 ։ Իսկ Թագաւորն Վրաստան փախչէր յաշխարհն Յունաց . և 'ի նմին անդէն վախճա- նեցաւ 155 ։

Եւ Մանուէլ առնէր աշխարհին

Հայոց ամս բազումս երեք որդւովք իւրովք. որոց անուն անդրանկանն Համայեակ և երկրորդին Արտաւազդ, և կրտսերոյն Համազասպ։

Իսկ յետ այսորիկ զկնի թագաւորին Պապայ Հայոց որում՝ անուն էր Զարմանդուխտ, առնոյր ս-պարապետն Մանուէլ զնա երկու որդւովքն իւրովք զկնի Պապայ [156], պահէր զնոսա արքութեամբ ըստ օրինի քրիստոնէից, և անուանէր զնոսա որպէս զորդիս թագաւորի։ Որ յետ այնորիկ կալան զաթոռ թագաւորութեան հօրց իւրեանց Արշակունեաց։

Եւ յետ այսր ամենայնի փոխի յաշխարհէս Մանուէլ մահուամբ, և տարեալ թաղեցին զնա 'ի գաւառէն Հայոց մեծաց՝ 'ի Տարօն գաւառի 'ի վանս Գլակայ [157]։

Իսկ որդոյն Սահակայ Պարթևի ոչ գոյր [158] որդի, բայց դուստր մի, որում՝ անուն էր Սահականոյշ. որ տուաւ յամուսնութիւն Համազասպայ անուան Մամիկոնի որդւոյ Մանուէլի [159]։ Որ եղեւ 'ի Համա-

զատապայ սուրբն Վարդան և պան
չեղլին Հմայեակ, որ անուանք և
ղեն, 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր
մեր. որում վայելէ փառք իշխա
նութիւն և պատիւ այժմ և միշտ,
և յաւիտեանս յաւիտենից. ամէն.

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

1. Ե. ՕՐ. Բաժանեն զերկիր Հայոց Թագաւորքն Յունաց և Պարսից։
2. Ե. Զայնպէս կրկին պատերա-գին խորգեայ զան Վաչէի։ — Տես զՎաչէէ ՚ի Պատմ. Հայ. Ա. 683։
3. Ե. Ի ճանապարհս արտաքսութեան։
4. Ե. Յաւելու. Նա տարեալ ՚ի գործս առաջինս։
5. Ե. Թաղեալ։
6. Ե. Արտաշատայ։
7. Ե. Ի Մէջ։
8. Ե. Աղթամարայ և տրուեալ տէրք և ամենայն աւարաւ .... ամենամանա-պահք։
9. Ե. Ի վերայ ամենայն կենաց իւրոց։
10. Ե. Ի ապարանս։
11. Ե. Ամենայն։
12. Ե. Զառանձնութեան։ — Յոր. եղեալ եր այսպես. չնչերակացու-թեան. զուցէ կամելով գրել ըն-կալք վերակացութեան։

13 · Ի · [illegible]

14 · Ի · [illegible] :

15 · Ի · [illegible] :

16 · Ի · [illegible] :

17 · Ի · [illegible] :

18 · Գախասնէր յոր · [illegible] :

19 · Ի · [illegible] :

20 · [illegible] :

21 · [illegible] :

22 · Ի · [illegible] :

23 · Ի · [illegible] :

24 · Ի · [illegible] :

25 · Օր · մեր 17 եւեթ բարձս յիշէ, իսկ այլքն՝ որպէս և ամենայն օրինակք Մեսրոպեայ երկցութեւն իբր 150 եւս բարձս և կամին · արդ յԻ· օրինակէն լցաք և մեք զնոյնս, զայլայլութիւնս օրինակայն զկարեւորսն՝ աստէն գրոշմեալ :

26 · Միայն Օր · մեր այսպէս · իսկ այլք Տր[illegible] կամ Տր[illegible] :

27 · Այլք՝ Անձևացեայք, կամ Անձե-
ւացեայք, և եօթն ՕՕ · Գնունեայք ։
28 · Վեց ՕՕ ։ Վարաժնունիք · այլք
Վարաժնունիք կամ Վարաժնունիք ։
29 · Եօթն Օր · Մարդպետունիք ։
2 Օր · Մարգպետունիք ։
30 · Միայն մեր, այլքն Պալունիք ։
31 · Բ օր · Կաղիք ։
32 · Այլք · Սիւնեանք, Սասնեանք,
Սիսեանք, Սիսինեանք ։
33 · Բ օր · Կաֆմեանք ։
34 · 4 օր · Մանաւազեանք · 4 այլ
Օր · Մանաւազեանք ։
35 · 7 օր · Կորդեանք կամ Կամրեանք ։
36 · 7 օր · Գնունեանք ։
37 · Ոմանք Եղնիկեանք կամ Եղնի-
կեանք ։
38 · 7 օր · Բամանիք · 3 օր · Բայ-
դեպաանիք ։
39 · Ոմանք՝ Արշարունեայք, Արշա-
րունեայք, Արշարունեայք, Արշա-
րունեանք ։
40 · Բ օր · Ապահունիք · մի օր · Ա-
պարհունիք · մեւս՝ Ապահունեանք ։
41 · Այլք Աղձնիք կամ Աղձնեանք ։
42 · 5 օր · Գօշեանք ։

43 . 7 ՕՐ . Կադմունիք ։
44 . 7 ՕՐ . Լմխունիք կամ Լմխունիք ։
45 . Այլք Գնթունիք ։
46 . 6 ՕՐ . Ապահունիք ։
47 . 3 ՕՐ . Մահեանք ։
48 . Ոմանք Մրունիք կամ Մրուանք ։
49 . Բ ՕՐ . Ռշտունիք ։
50 . 3 ՕՐ . Արծրունիք ։
51 . 7 ՕՐ . Սիւնեանք ։
52 . Այլք Գիմաքսեանք ։
53 . 3 ՕՐ . Մրունիք ։
54 . 3 ՕՐ . Գարդմանունիք ։
55 . 7 ՕՐ . Կոզեանք ։
56 . Բ ՕՐ . Վանանդեանք ։
57 . 7 ՕՐ . Ռաճունիք ։
58 . 7 ՕՐ . Սարծայրք ։
60 . Մի օր . Մեհփինեանք ։
61 . Այլք Դաշխարունիք , Դաշխարհն , Դաշխարին , Դաշտարին , Դաշրունիք ։
62 . Ոմանք Փերեժունիք ։
63 . Այլք Մոկեանք ։
64 . 7 ՕՐ . Աշպարեանք ։
65 . 7 ՕՐ . Ախագարեանք . Այլք Ախագարեանք ։
66 . Բ ՕՐ . Համաղունիք ։

67. Այլք Աափաանից ։
68. Այլք Ծայթրաանից, Մաթրաա-նից, Յաթրաանից, Յաթրաանից, Յայթրաանից ։
69. Այլք Վահանամիրադեանց, Վա-նահմիրադեանց, Վիհանամիրադեանց ։
70. Այլք Վարաշապեան, Վարա-շեան, Վարաշապեան ։
71. 3 օր. Անյպեայց ։
72. Չիք յ՚ի օր ։
73. 3 օր. Բայեան ։
74. Այլք Խորջեան. և ոմանք Խո-րենից ։
75. Այլք Համբաջեան կամ Հա-մբաջեան ։
76. Ոմանք Կորթնեան ։
77. Ոմանք Զարեհաւան ։
78. Այլք Բծնաանի, Վծնաանի, Բչնաանի ։
79. Այլք Կաաաչեան, Կչաչեան ։
80. 7 օր. Արփաշամեան ։
81. 7 օր. Արծաաայ պէրք. Մի օր. Արքայծապէրք ։
82. 7 օր. Դադաեան. 2 օր. Տա-ռեան ։
83. 7 օր. Բափրապաանից. Ոմանք

Վարդավանին , Վարդավանին ,
Դափրադանին :

84 . Այսր Դարադարանին , Դարադա-
րանին :

85 . 7 օր . Քաղենաց :

86 . 6 օր . Արդախաղ :

87 . 4 օր . Հինանանկանին կամ Հինա-
նանկանին :

88 . 7 օր . Հենգապայանց . Այսր
Հենգապեյեանց , Հենգմանապայն ,
Հենգմապայանց :

89 . Այսր Դորաչանց , Դրաչանց ,
Զորադեայց :

90 . Ոմանք Վարդանեանց :

91 . Այսր Դրամապ , Դրամապ ,
Արամեանց :

92 . Ջեր 'ի Բ :

93 . Այսր Մաշխաւանին կամ Մա-
խաւանին :

94 . Այսր Արոածեանց :

95 . Ոմանք Կղարծ , Կղարչ :

96 . 5 օր . Ծախապանախաց :

97 . Այսր Դերջանին , Դերջանին ,
Դերոանին , Դերջանին :

98 . Այսր Բարմայ , Բարմայեն :

99 . Այսր Կիմայ , Կղմայ , Կղմայ :

100. Մի օր. յաւելու և Գատատա–կէտ։

101. Այս Յուսիփեան կամ Յով–սեփեան։

102. 3 օր. Փոխմայանի։

103. Այս Մարտեան, Մայիսեան։

104. 7 օր. Խնկոյն կամ Հնոյն։

105. Ոմանք Բեղնաւոր, Բողոքանի։

106. Ոմանք Աղբեւանի, Աղբեա–նի, Աղբեաւանի։

107. 7 օր. Յիսնեանի, 3 օր. Յիս–նեանի։

108. 7 օր. Կղզանի կամ Կղըզ–նանի։

109. 3 օր. Տաղլանի։

110. Այս Մաղխենի, Մայանի, Մասնանի։

111. Ցանկալի էր մեզ փոքր մի ևս երկայնամտել հեղինակին կամ առաջին գաղափարողացն և ող– ջունել զնոսա դասակարգութեան իշխանաց տանս Հայոց. զոր թուի թէ և ինքնին որ նախ գրեաց ըն– դօրս մեծին 'Ներսէսի' յարքունի դիւանացն էհան։ Մեծին Խոս– րովայ կարգեալ առն պատմիչ

զօրաձս Հայոց . իսկ խորանեցին
( Գ . կէ ) յԱրտաշէս Սաս-
նեանց . Թերեւս զի փոփոխեալ
սա զխոստովան կարգան և ըստ
կամի յարգարեաց . զնոյն վերը-
ոյն եւ հաստատել և Ս . Սահակ
որդի և ժառանգ Ներսէսի , յետ
բարձման Արշակունեացն պայա-
զատութեան՝ ձեռամբ Վռամայ
ալքային Պարսից , որպէս յիշէ
Մովսէս . և հաստատէ ստուգու-
թեամբ նոյն ինքն Նամակ գահոյց
Սահակայ , որ յառաջ քան զամ-
սակաւս՝ գտաւ ըստ մասնէ ՚ի մա-
գաղաթի երկաթագիր . ՚ի կողո
մատենի միոյ , ՚ի Մոսկով քաղա-
քի , զոր և գաղափարեալ բանա-
սիրի ուրումն և բարեկամի՝ մա-
նաւորեաց և մեզ . յորում Թուին
բարձր եօթանասուն , և պակա-
սէ պատճէնն , որոյ և սկզբանն
բանք Թերատք . . . . « Հրամա-
» նաւ արքայից արքայի . և ես
» Սահակ Հայոց կաթողիկոս . . . .
» եգաք մատանի զարքայից ար-
» քայի եւ զմերս . եւ է այսպէս
» արդար և ճշմարիտ .

Առաջինն իշխանն Հայոց և Մախզոզն

Ա․ Սիւնեաց տէր․ Բ․ Աղբեան, Գ․ Արծրունեաց տէր․ Դ․ Մամիկոնէից տէր․ Ե․ Շահապն Ծոփաց տէր․ Զ․ Մոկաց տէր․ Է․ Ռշտունեաց տէր․ Ը․ Վահունեաց տէր․ Թ․ Կասպէից տէր․ Ժ․ Անձաւացեաց տէր․ ԺԱ Ապահունեաց տէր․ ԺԲ․ Կամսարականն․ ԺԳ․ Այլ Ապահունի․ ԺԴ Վանանդացին․ ԺԵ․ Ամատունի տէր․ ԺԶ․ Գողթան տէր․ ԺԷ․ Գնունեաց տէր․ ԺԸ․ Այլ Անձաւացին․ ԺԹ․ Տայոց․ Ի․ Բասենոյ դատաւորն․ ԻԱ․ Գնթունեաց տէր․ ԻԲ․ Վարաժառունին ․ ԻԳ ․ Գարդմանեաց տէր․ ԻԴ․ ․ ․ ․ ԻԵ․ Սահառունին․ ԻԶ․ Գաբեղենից տէր․ ԻԷ․ Աբեղենից տէր․ ԻԸ․ Սիւնեաց երկրորդն․ ԻԹ․ Արծրունեաց երկրորդն․ Լ․ Արծրունեաց երրորդն․ ԼԱ․ Մամիկոնէից երկրորդն․ ԼԲ․ Ռոփսեանն․ ԼԳ․ Գաշոցեանն․ ԼԴ․ Դիմաքսեան․ ԼԵ․ Բուխա Դիմաքսեան․ ԼԶ․

Ա.Ա Արեղեան . ԼԷ . Ա.Ա Դի-
մաքսեան . ԼԸ . Պալունին . ԼԹ .
Առաւեղեան . Խ . Աշաւհմորեան .
ԽԱ . Համրուժեան . ԽԲ . Վա-
րազակեանն . ԽԳ . Ձիւնա-
կանն . ԽԴ . Ակէացին . ԽԵ . Զա-
րեհաւանեանն . ԽԶ . Ընծայե-
ցին . ԽԷ . Մանդակունին . ԽԸ .
Սղկունին . ԽԹ . Տայգրեանն . Ծ .
Երմանթունին . ԾԱ . Սպանդու-
նին . ԾԲ . Առաւենեանն . ԾԳ .
Տրունին . ԾԴ . Մամբերացին .
ԾԵ . Հաւնունին . ԾԶ . Բժնու-
նին . ԾԷ . Քաջբերունին . ԾԸ .
Մեհնունին . ԾԹ . Նախճէրին .
Կ . Քաղաքացեան ազգունի .
ԿԱ . Որսացեան ազգունի . ԿԲ .
Արտաշէսեանն . ԿԳ . Վանան-
դացին երկրորդ . ԿԴ . Ցուրն .
ԿԵ . Վխմանու . ԿԶ . Առքաճոյ .
ԿԷ . Ծփրակողմաքեան . ԿԸ .
Գազրիկեանն . ԿԹ . Մարացեան
տէր . Հ . Վարդապատունին » :

112 . Զորոց գլխու Բ. որ . ամէ «ԵԸ.
» կու հազար և քառասուն » այս-
պէս վկայէն և ամենայն պատմիչք
վարուց Ներսախ :

113. Զպատմութիւն պատկերին և զսեղւոյն գոցեն խնդրողք 'ի Մատենագրութիւնս խորենեցւոյն։

114. Զկնի՝ 34 ամս աւել զբովանդակ ժամանակ աթոռակալութեանն, որպէս և այլք 'ի պատմչաց և գաւազանագիրք. սակայն ոչ ստուգի 'ի ժամանակագրութենէ, հարկ է թէ ոչ աւելի քան զքսան ամ եկաց նա յաթոռն. Իսկ որք աւելի ասեն՝ գուցէ զամս քահանայապետութեան նորա համարին հաշուել յամէ մահուան հաւուն իւրոյ Ս. Յուսկան։

115. Միւսն՝ Յէ-բն . . . Երրէ- ղի -նջի կ-փ-րէ-լ։

116. Միւսն՝ Բ---բի-ն։

117. Միւսն՝ Աչի -ծէ։

118. Միւսն՝ Գ-ղրտէցան։

119. Միւսն՝ Խն-յր։

120. Միւսն՝ Անտէր--նչ։

121. Վասն գիտակնաց ասցա ասէ Վարդան պատմիչ. « Յաւուրս » յայսոսիկ (յամին 1161) յայտ-

» նեցան 'ի Շահապիվանս մար-
» մինք ապստամբացն Գնելայ, ան
» փուտ հանդերձիւք և արքենա-
» կանաւ մարմնով, որպէս և
» ապստամբն բազ անհինչ Ս. Ներ-
» սէսի »:

122. Բ. Խորենեայ գրաբարեան յօրինա-
» նել. Քայց ով համաբառնեն. դէ յայնմ
» ժամու հարեալ էր դրան Հայոց
» թեւը երկու 'ի Հռովմեայ »:

123. Բ. ՕԲ. Ցասելով. Էր ադոլ
րել 'ի խորգ և 'ի մանրէ:

124. Բ. Մովս.— Խորենացի.. Աղուն-
դորաց:

125. Այն է Արիստակէս, որ է
խաղխամար ասաց կատակեց-
այլոց յաւախակեցման:

126. Բ. Էր Վոսփէնի ամենայն և այլ
յաւուրն յայնմիկ:

127. Բ. Հեծեալին, Բագրատունեաց,
Խծամակաց, Ծուծայ, Գնթայ,
Գողթնաց, Մոկաց, Ոստայ,
Շղեայ, Ճղեայ, Մարդաց և
Գնեայ, Ստորերոյ:

128. Ի լուսանցսն եղեալ էր Կց.
Դ.Կ. այսինքն է կցուրդ 'ի ձայն
Դ.Կ (չորրորդ կողմն):

129. Նատենոր յիշատակութիւն Մես_ րոպայ, որպէս և զնի (էջ 100) մատնանիշ խիւ ցուցանէ, զի կամ առ ինքնին գրեաց նախ զնորս մե_ ծի քահանայապետին, և կամ պատմեաց մանրամասն, և մի ումն յաշակերտաց նորա եկեղ 'ի գիր. բայց հաւանագոյն է թէ ինքնին գլխաւին բանս Մեսրոպայ նշանակեալ էր գրով, զայսթան ասեմ և բղ_ գուշակութիւնն. որք աստ փո_ խեցան 'ի հայ գիր: Իսկ մի որ_ գեք յաշակերտաց Մեսրոպայ գիտողագոյն էր զնորս գրել, քան թէ նորին ինքեան քեռորդ_ ւոյն՝ քաջին Մուշեղի, և հա_ ւաստի առն կարծեացս որք քննեալ գգիտան Երուսաղեմա_ ցւոց 'ի Ս. Յակոբ՝ աստղին թէ այս պատմութիւն վարուց Ներ_ սիսի մակագրեալ էր յանուն Խորենեցւոյն: Սակայն եթէ Մուշեղի գրեալ իցէ և եթէ Աբրահամու, զի առ կոչի Հեղի_ նակ Արեւելեան գրոց պատմու_ թեանց, յորմէ օժանդակեցաւ

Մեսրովբ երէց վերատեսին յերիւ-
րող պատմութեանն, և եթէ նո-
ցին վարդապետ, երեւի ու-
րեք և ձեռին տարի մատաղ 'ի
նոյն։ — Իսկ բանք յիշատակի
Մեսրովպայ երիցու այս են.
« Ի ՆԺԶ ( 967 ) Թուակա-
» նիս Հայոց և 'ի վերադիտո-
» ղութեանն տեառն Վահանայ
» Հայոց կաթուղիկոսի, և յամս
» Աշոտոյ Բագրատունւոյ Հայոց
» Թագաւորի 'ի աւանէն Շիրա-
» կայ, ես Մեսրովբ նուաստ
» քահանայ 'ի Վայոց ձորոյ 'ի
» գեղջէ Հողոցմանց, ուստի Յով-
» սէփ էր երանելի նահատակն
» յաւուրս որդւոյն Վարդանայ...
» մեծ ցանկութեամբ ծաղկաքաղ
» արարի գլխոցս զայս 'ի Հայոց
» Պատմագրաց յԱրեւելից գրոց·
» զյաղթութիւն և զկատարու-
» թիւն Թագաւորացն Հայոց և
» Վրաց, և զառաքինութիւն և
» զսքանչելիս հայրապետաց տոհ-
» մին սրբոյն Գրիգորի Լուսա-
» ւորչին, և զանուն և զկատա

» որքոյն Ներսէսի , և զքաջու-
» թիւն և զյաղթութիւն արխա-
» կան ազգին Մամիկոնենից : . . .
» Եւ արդ զայս հանեալ յՆերե-
» ւելից դրոց 'ի Հայոց մնացոր-
» դացն պատմութեանց . և ետու-
» որդխայելոյ խմոյ սուրբ սա-
» զանին ծննդեամին , Վահանայ
» Մամիկոնենից , 'ի գեղջն որ
» կոչի Վարժի » :

130 . Ի լուսանցս Կց . Դ.Կ . Աշյա-
քիկ և որք զհնի Ողջոյնքն , մեհք
և խորինք և յաւերժականք իմն
բանք . որք ապա յերգս չարա-
կանաց մերոց յեղան 'ի կարգս
հանգստեան , կամ յառաջա-
գոյն 'ի Ներսէսէ առաջադրեալք
էին և կամ ուսեալ 'ի բանից որոց
հարց եկեղեցւոյն Յունաց . և կամ
զուգախառնութիւն ժամուց մա-
հուն և մերձեցելոյ յաւիտենա-
կանութեան՝ ազդեր նմա . և որ-
պէս 'ի կեանսն՝ նոյն և 'ի մահուն՝
հրաշալի ամն և մեծոգի դաւանէր
'ի մահացուս Պարթեւն այն . և
արժան է մեզ երախտիս նմա մա-

տուցանել և վասն այսպիսեաց նորա աւանդելոցս բանից. փ-էհաս խիկ մեզ ընթեռնուլ ՚ի Շարականոցի հնում, ՚ի դասս հեղինակաց երգոցն՝ յիշել այսպէս « Զհանգստեանն՝ Ներսէս Գար. » Թեւ »։ Գուցէ թէ և ՚ի կարգս մատենին աղօթից նորա անկեալ էին այս բանք. զի յիշի ուրեմն և մատեան աղօթից յանուն նորա։

131. Ի Լուս. ՁԱ. այսինքն է, առաջին ձայն։

132. Բ. Հ-այ-լ-է-լ։

133. Բ. Ք-ահ-ան-այ-ապ-ետ-ու-թ-ե-ան։

134. Գերութիւն խաչին ՚ի Պարսից հանդիպի ամօք աւելի քան զ՚170 յետ մահուան Ս. Սահակայ, յաւուրս Խոսրովու։ — Չիք երկբայութիւն, նա իբրեւ հաստատուն աւանդութիւն ընկալեալ է յազգէս, զի բազում բանս մարգարէականս խօսեցաւ այրն Աստուծոյ Ներսէս ՚ի ժամ մահուն. այլ և ընդ այն ոչ է երկբայել, զի յանուն նորա յօդեցին և այլք բանս բազումս, որպէս և

տառ յետ բանից ասմանն Երու-սաղեմի 'ի Հռովմայեցւոց՝ 'ի կարգի պատմութեան Մեսրոպայ երկցու գամենին երկար բանք ըղկատարածէ ժամանակաց և զյետին Թագաւորութենէ Հայոց և զխախտմանէ աշխարհի. որ 'ի հին պատմութեան վարուցս յայտնի ոչ գտանին։ Իսկ յԲ Օր. ուրոյն զառ յետ պատմութեանն գրեալ կայ այն գլուխ, և զի պակասէ սկիզբն և խորագիրն, անգիտանամք և զհեղին. են են և յայսրէն եդեալ բանս բնագրին՝ ինչ ինչ 'ի ձահ քննելոյ և ճշգելոյ, բայց ոչ ներէ մեզ տեղիս։

135. Բ Օր. Ըստ էանէն։

136. Բ և Գ. Պատրաստ։

137. Գ. Հոլանայէ։

138. Բ. Գ. Վճառէ։

139. Բ. Մնլէփէնէ։ Գ. Նէղէփէնէ։

140. յՕր. պակասէր ———րս։

141. Երկու Օր. Որանց և չէրէրէ փայէ ղարքայութեան։ Թուեցաւ ամանց 'ի հարց և յաստուածաբանից՝ թէ որք անկնունք մեռա-

նին երախայրին՝ յետ յարութեան մեռելոց կեցցեն 'ի վերայ երկրի. յայս թուի ակնարկել և սրբոյս. Բայց Եկեղեցւոյ ոչ է վճռեալ ինչ հաստատութեամբ զխնդրոյս, և ոչ մեզ վիճելի.

142. յՕր. ՆՆՋԵՑԵԼՈՑՆ.

143. Ի լուս. ԶԴ. ԿԸ.

144. Յայս վայր կարգեալ Դ. որ-
դարութիւն, այսպ զեղջէ ասելով. ԵՒ ԱՅՆ ԱՄԵՆԱՅՆ՝ ԶՈՐ ԳՏԱՆԵ 'Ի ՍԻ-
ՆՈՊԱՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽՈՐԵՆԱՅ. ԵՒ Ա-
ՂԹԵԱԼ ՅԵՐԿԱՐ, ԵՒ ԱՅԼ ՀՐԱՄԱՅԵԱԼ
ՔԱՂՄԱՈՒԹԵԱՆ ԾԱՂՈՒԿՈՅՆ 'Ի ՔԱՋ ԵՐԹԱԼ, և
այլն. որով յայտ առնէ՝ զի երկայք
եւս էին բանք աղօթիցն, զորս
և քան զնշանակեալսն յ'Ա. և 'ի
Բ. օրինակսն, և զի ոճով գրեալ
էր ամենայն յընդարձակ պատ-
մութեանն.

145. Այսպէս յՕր. իսկ 'ի Բ. .
ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԳՐԻԳՈՐԻ. ԵՒ ՇԱՐԱԿ-
ՆԻ ԱՂԱՂԹԵԱՄԲ. ԵՒ ԱՅԺՄ ՏԵՐ ՑԷ-
.... և այլն.

146. Բ ՕՐ. Յաւելու. Ի ՅԱՐԿԵՐ
ՅԱՒԵԼԵԱԼՍ, ՈՐ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԵՆ ԱՅԼ

խափելոյ . և զոր յանցեալ է իմ գի-
տութեամբ և անգիտութեամբ՝ թողու-
թիւն շնորհեա ինձ մարդասիրութեամբ
քո . քանզի ոչ է մարդ որ կեցցէ և
ոչ մեղիցէ . զի դու միայն ես առանց
մեղաց , և քեզ փառք յաւիտեանս :

147 . Աստանօր աւարտէ Գ . որ . որ-
պէս և կարգ բանի պատմու-
թեան որոյն պահանջէ . բայց
զոր հետևեալ գլուխ վերջա-
բան 'ի բուն Օր . և յ' Գ . և յայ-
լում երկաթագիր հատուածի
պատմութեանն , զոր ունիմք . և
կոչեցայք Գ որ . , գրեալ 'ի
սկիզբն կոյս ԺԲ դարու , որպէս
յիշատակարանն ցուցանէ . «Գրե-
» ցաւ հնահրաշ պատմութիւնս
» տեառն Ներսիսի մեծ վկայի
» Քրիստոսի և աստուածազա-
» ւան վերադիտողի Հայոց . 'ի
» թուականիս Հայոց 'ի ՆՃԶ
» ( 1131 ամ տեառն ) . Ձեռամբ
» մեղուորիս և անարժան ծա-
» ռայիս Քրիստոսի Յակոբայ
» կրսերի և վերջ . . . . . . .

148 . Բ Օր . Նախարարքն և սեպուհք

և Եպիփանու , և Միքայէլի , և այլն ։

149 . Ի . Իւր Սահմանանեան , այսպէս և զինի ։

150 . Ի . և այսպէս աստուածեան շունչ ։

151 . յՕր . Գաղաղեայ ։

152 . Ի . Զուլինլ Գ ։

153 . Մովս . Խոր . մի ոք միայն առէ զևկն 'ի Ճենաց Մամգուն անուն . իսկ սա երկուս՝ Մամ և Կոն , որում և այլք 'ի պատմչաց հետևեցին . քանզի Ագաթանգեղի առեն 'նախ այսպէս զայս գրեալ . և ըստ 'նմանէ՝ Ղազարայ Փարպեցւոյ , յորոց և այլք , որպէս վկայէ և Սիմէոն Ապարանեցի 'ի Վիպասանութեանն Մամիկոնենից .

« Այլ զՃենացւոց յիշատակեալ
զՄամիկոնեանս զեկուցեալ . ( Ղազ . Փարպ . )
Բայց Մամէսի ոչ հայնակցեալ ,
Ագաթանգեղայ զոյ հետևեալ .
Այն՝ որ զՃենապատն Ճենաց հարցեալ՝
Ի սգանէ զզարմացն ասեալ ,
Որ է գրեալ մեզ ասացեալ ,
Մամ և Կոնակն փախուցեալ
Ճենաստանէ 'ի Պարս անցեալ , և այլն .

Այսպէս վկայի և 'ի քաղուածս պատմութեանց կարգեալս նախ քան զպատմութիւնն Հերակլի 'ի Սեբէոսէ, որ 'ի Հերոսն տպագրեցաւ 'ի Կոստանդնուպօլիս. ուր (էջ 28) բանքն զձենայ՝ և Հարցուածն՝ Ագաթանգեղեայ են և ոչ Ստեփանոսի Տարօնացւոյ, որպէս երկբայի կամ կարծէ բանասէր Հրատարակիչն. քանզի Ստեփանոսդ այդ՝ Ասողիկն է, այնչափ կրսեր ժամանակաւ քան զՍեբէոս որչափ սա քան զԱգաթանգեղ. և 'ի նմանէ գաղափարեալ է ողջոյն Հատուածն որ 'ի գլխոյ անուանեալ Բ, գալրութեան՝ ցրանն.. «զնոյն ձեւ օրինագրէ»: Իսկ Հետեւեալն «ԶՄամիկոնէից» և այլն վերնագիր է նորոյ Հատուածի տեղեկութեան զՄամիկոնենից, այլ թերատ և խառն. որպէս և ամենայն բանք պատմութեանն ց'Գ. անուանեալ գալրութիւնն, խմբագրութիւնք են զանազան պատմւոյ բանից. բազում ուրեք անյարիր և պակասք. և յայտ է թէ է

*ինչ որ 'ի Սեբաստիա է և է որ 'ի յետ. նոյ մասնեալ կատարեալ է յայն :*

154 . Դ. ՕՐ. պապանձեալք Հմայեակ :

155 . Բ և Դ. յաղթութեամբ :

156 . Դ. և անդ վախճանէր : Բ. և անդ թաղէր :

157 . Դ. Իսկ կինն Պապայ թագաւորին Հայոց, որում անուն էր Զարմանդուխտ, երկու որդւովքն իւրովք. որոց անուն առաջնոյն Արշակ, և երկրորդին Վաղարշակ, առնոյր Մանուէլ, *և այլն* :

158 . Դ. Եւ յետ այնորիկ քանի յաղթահարեալ Մանուէլ սպարապետ Հայոց տէրն Մամիկոնենից իւրով մահուամբ. և թաղեալ զմարմին նորա տարան 'ի Տարօն գաւառի և թաղեցին 'ի վանսն Գլակայ :

159 . Բ և Դ. արա որդի :

160 . Դ. Համազասպայ որդւոյ Մանուէլի Մամիկոնենից տեառն : Եւ եղեն 'ի Համազասպայ սուրբն Վարդան և Երանելին Հմայեակ, և [illegible] Համազասպեան : *Յիշէ և* Բ. Օր. զ'Երանելին Համազասպեան, *և յաւելու* . Որ մնացին 'ի [illegible] էին

ինա օրհնութիւն արքային Ներսէսի · որդւոյ և ՚ի նոյին գաղմութեանց ա_ նուն չքաջութեան նոյա , որ գործէ_ ցան անթուաման գամսօքն ՚ի Թորգոմայ Յեռոսն : *Իսկ զպատմութիւն սո_ ցա ունիմք յԵղիշէայ , որպէս և առէ իսկ յայտնապէս Օր · մի գրեալ ՚ի* ՉՁԴ · Ի նոյին գաղմու_ թեանցն առանոց չքնաղութեան թագա_ թեանց , զոր Բազուամ ամաց բանիւք յորդորեալ է որբային Եղիշէի վարդա_ պետի · որ և գործեցան ՚ի թագ ար_ քայութեանն երկնից :